



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Липун

25

Сергей Егор

891. 99  
9 - 81

1906

-6 NOV 2011

891.542-3

9-81

2861

ԳԵՂՂԱ ՀՈՒԲԱՐ

ԻՄ ԶՐՈՅՑՆԵՐԸ

891.99

9-81

ԳԵՂՂԱ Հ.

ԳԵՐՐԳ ԶՈՒԲՐԱՐ.

891.99-3

9-81

# ԻՄ ԶՐՈՅՑՑՆԵՐԸ



ԳԻՐՔ II.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ  
Տպարան Սերովբէ Աւագեանի  
1906

10361

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го декабря 1905 г.

## ՃԱՄԻՐԱՄ

(Պատկեր)

Գիշերը հասնում էր:

Բնութիւնը գիշերուայ աշխատանքից յետոյ քոն  
էր մտնում. ոչինչ չէր խանգարում նրա քաղցր նիրհը.  
հանգիստ էր առնում քամին, որ երբեմն-երբեմն միայն  
անցնելով երկար մուգ-կանաչ սօսիների միջով, շո-  
յում էր նրանց թերթիկները, կոտցնում էր նրանց  
սրածայր կատարները և իսկոյն կորչում, անհետանում  
էր լուռ ու մունջ տարածութեան մէջ. հանգիստ էին առ-  
նում թռչնիկները, վերջ տալով իրենց ուրախ, անհոգ  
երգերին. հանգիստ էր առնում նոյն իսկ առուակը,  
որի կարկաչը այդ ընդհանուր խորհրդաւոր լուսթեան  
մէջ դարձել էր աւելի մեղմ, աւելի ծոյլ...

Փերեգեայ երկնակամարում երեաց լուսնեակը և  
ձգելով վերայից արծաթափայլ քողը, սկսեց հանգարտ  
լողալ եթերի անհուն տարածութեան մէջ. լուսնի  
գալուստը ողջունեցին ոսկեայ աստղերը և ուրախ-ու-  
րախ պսպղացին երկնային կապուտակում...

Անահիտի մեհեանի մարմարոնեայ սանդուղքները  
սպիտակին էին տալիս լուսնի մեղմ փայլի տակ և  
իջնում էին ցած, մեծ գեղեցիկ պարագալը, որի աւա-  
զոտ, գեղնագոյն ճեմելիքները անհետանում էին մուժ  
խաւարի մէջ:

Լուռ էր պարտէզը և միայն շատրուանը թափում  
էր իւր խոշոր, արծաթափայլ արցունքները տեղատեղ  
բորբոսնած, կանաչած աւազանի մէջ:

Մեհեանի անկիւնի փոքրիկ պատուհանը լուսա-  
ւորուած էր. կամարակապ, տեղատեղ ոսկեզօծ առաս-  
տաղից կախուած լապտերը սփոռում էր իւր աղօտ, երե-  
րուն լոյսը և անուշահոտ ձէթի բուրմունքը տարածուել  
էր այդ փոքրիկ սենեկում, որ մեծ քրմափետի բնա-  
կարանն էր. լայն բազմոցի վերայ բազմած էր ինքը  
քրմափետը: Երկարահասակ, չոր ու ցամաք, մօտ 70  
տարեկան այդ մարդը պատկանում էր այն անհատնե-  
րի թուին, որոնք նոյն իսկ առաջին անգամից խորը  
տպաւորութիւն են թողնում դիտողի վերայ. նրա լայն,  
կլորակ ճակատը վերջանում էր իսիտ յօնքերով, որոնց  
տակ փայլում էին սուր, թափանցիկ աչքեր. այդ աչ-  
քերի հայեացքը միշտ մելամաղձոտ, միշտ տիսուր էր.  
հանգարա նայում էին նոքա և գեղեցիկ փորագրած  
պատերին և յատակի գոյնզգոյն տաշուած քարերին  
և բազմոցի մօտ մորթու վերայ նստած օրիորդին, որը  
առած իւր դուխը ձեռների մէջ՝ խուլ կերպով հեկե-  
կում էր: Երեսում էր, որ ծերունի քրմափետի դլխով  
անցել էր շատ բան. կեանքը իւր առօրեայ երեսյթ-  
ներով, իւր կարճատե երջանկութիւնով և անվերջ  
կոկիծով լու ծանօթ էր նրան. ամեն ինչ փորձել էր  
ծերունին և նրա լայն ճակտի խորը ներս ընկած խոր-

շոմները կարող էին պատմել շատ անցքեր, շատ բաներ:

Սենեկի լուռթեան մէջ վերջին անգամ լուսեց  
օրիորդի խուլ խեղզուած հեծկլտանքը և քրմափետը  
վեր կացաւ բազմոցից և բացեց գունաւոր ապակինե-  
րով զարդարած պատուհանը. լուսնի ճառագայթները  
թափուեցին ներս և ընկնելով օրիորդի վերայ, լուսա-  
ւորեցին նրա արտասուքներից թաց, մի քիչ ուռած  
սև աչքերը, նրա ճիշտ հայկական նուրբ գծագրած  
երեսը և մսալի, կարմիր, այդ ըոպէին պինդ սեղմուած  
շթունքները:

— Վեր կաց, Մայի... ես այժմ գիտեմ ամեն  
ինչ... լսիր ինձ... անմահ աստուածները պարզեել  
են խեղճ մարդկութեանը մի մեծ, սքանչելի պարզե.  
դա սէրն է. նա բերում է իւր հետ և երջանկութիւն,  
և կոկիծ միանգամայն. այդպէս է և վարդը. գեղեցիկ  
ծաղիկը ունի և փշեր. ով կամենում է վայելել վարդի  
անուշահոտ բուրմունքը, նա շատ անգամ ծակոտում է  
իւր ձեռը և ցաւ է զգում. արտաքուստ առողջ մրգի  
մէջ, շատ անգամ բուն է զրած լինում որթը և ով  
գիտէ, կարելի է ամենաբաղդաւոր, երջանիկ սէրը  
անգամ տանջանք ու ցաւ է սիրողի համար:

Ծերունին տարաւ իւր սպիտակ, երկար մատնե-  
րով ձեռը ճակտին, տրորեց և ձգելով ուսից երկար  
ալեզարդ մազերի գանգուրները, շարունակեց:

— Դու սիրում ես, Մայի, և քո սէրը տանջում է  
քեզ, որովհետեւ փոխագարձ չէ այդ սէրը: Անմահ  
Աստղիկը վառել է միայն քո սիրալ և իւր նետով չէ  
վիրաւորել քո սիրեցեալի սիրալ...

— Ոչ... ոչ, սրբագան հայր, բացականչեց լալա-  
գին իշխանուհին, ոչ... ոչ...

Արմէնը սիրում է....

— Ուրիշն... զիտեմ...

— Այս... Շամիրամին... և ես իշխանի դուստր, այնքան ամբաղդ եմ, որ իբր մուրացկան, պիտի հայցեմ Արմէնից նրա սէրը և պիտի գողաճամ Շամիրամից այդ սէրը...

Ո՞հ... ես անզօր եմ, սրբազն հայր... և ահա ծնկաչոք ինսդրում եմ քեզնից օգնութիւն... դու կարող ես ամեն բան անել... դու կարող ես աղօթել անմահ աստուածներին և նրանք կղարձնեն Արմէնի սէրը Շամիրամից դէպի ինձ... օգնիր ինձ և ես խօստանում եմ զոհեր մատուցանել ամենակարող Անահիան... ես ինուիրեմ նրան իմ ոսկեայ մանեակս... զիտես այն, որ հայրա բերեց Հրէաստանից... միայն օգնիր ինձ... օգնիր, աղաչում եմ քեզ:

— Վեր կաց, Մայի, անմահ աստուածների համար չկայ ոչինչ անկարելի... եկ վաղը մեհեանը ու աղօթիր և աստուածները կօգնեն քեզ...

Ծերունի քրմապետը կռացաւ, բարձրացրեց բարձից Մայի իշխանուհուն և երկուսը միասին դուրս եկան մեհեանից:

Արշալոյաը ծագում էր:

Արևելքում հորիզօնը ծածկուել էր նրա առաջին մեղմ կարմիր շերտերով, սրանց մէջ տեղատեղ երեսում էր արդէն երկնակամարի յստակ ջինջ ոսկեզոծ կապուտակը:

Մեհեանի մարմարոնեայ սիւները ծառերի մուգ կանաչում աւելի էին սպիտակին տալիս և նրանց փաթաթւող խաղողի թերթիկների վերայ հագիւ նկատելի ցոլքով խաղում էին ծագող արեի առաջին, դեռ

վախկոտ, երերուն ճառագայթները:

— Ես կդամ, շշնջաց Մային և ծածկելով իւր զլուխը սպիտակ թափանցիկ քողով, մտաւ պարտէզի օձապտոյտ ճեմելիքներից մէկը:

Քրմապետը ոչինչ չպատասխանեց: Նա, ձեռերը խաչած կրծքին՝ կանգնած էր մարմարոնեայ սանդուղքների վերայ և անժարթ նայում էր ծագող արեին:

Նրա երեսի արաւայրայութիւնը մտածող և ծանրակշիռ էր և նրա նեղ, չորացած անարիւն շրթունքները շշնջում էին առաւտեան աղօթքի խօսքերը:

Եղեգնով և թուփերով ծածկուած գետի բարձրաւանդ ափը կազմում է Ա... լեռնաշղթայի եղերքը, որ, իջնելով ցած, վերջանում է փոքրիկ, կանաչազարդ զառիվայրով: Այդ զառիվայրի վեշերից միանգամից երեսում է ամբողջ գետը իւր սառն արծաթեայ փայլով, մուգ կանաչ ափերով և օձապտոյտ հոսանքով:

Միքանի նաւակներ կողքի ընկած են ափի աւագում և արեի ճառագայթների տակ սեխն են տալիս իրենց շուռ եկած տախտակամածներով. նրանց ստուերում նստած են ձկնորսները և կրակի վերայ եռոտանից կախ տուած ամանի մէջ պատրաստում են իրենց կէսօրեայ ճաշը: Վայրի բագերը լայն տարածել են իրենց թերթը օգի մէջ և, թռչելով գետի միւս ափը, իջնում են եղեգնի մէջ, իրենց բունը: Օդը անշարժ է և ողողուած գետի ջրի կազդուրիչ թարմութեամբ:

Կէսօրեայ արել շեշտակի ձգում է իւր ճառագայթները գետնին և ոսկեփայլ ցոլքերով անդրադառնում է գետի ջրերում և պսպղուն փայլով խաղում է

կանաչ եղեգնի սրածայը թերթիկների, շուռ լնկած նաւակների և ձկնորսների արևառ, քամուց սեացած, կոշտացած երեսների, նրանց ծակծկուած շորերի ծուէնների վերայ. այդ շորերի տակից տեղ-տեղ երկում են ձկնորսների մազոտ, յաղթանդամ կուրծքերը, ամսոր թիկունքները և երկաթեայ ուռած մկանունքները:

Խարոյկի ծուխը կամաց, շեշտակի բարձրանում է վերև անշարժ օգում և նրա քուլաները երկար չեն ցըլում եթերքի տարածութեան մէջ:

Հեռուից, գետի միւս ափից, լսում է տխուր, սրտաճմիկ երգի կլկոցը. կարծես մէկը գանդատվում է անողոք բաղդից և այդ պարզ երգի մէջ պատմում է իւր չարչարանքը, կրած աղէտները, իւր սև օրերի սրտաճմաշն պատմութիւնը: Իբրև հակապատկեր դրան, երեխաների մի խումբ, ուրախ, զուրաթ լողանում է գետում և գուռում կոչիւնով թնդացնում է օդը. նրանցից մի քանիսը դուրս են գալիս ջրից, վազվզում են ափին և խրուելով տաք աւագի մէջ, դէմ են տալիս արևի այրող ճառագայթներին իրենց մերկ, թաց մէջ-քերը և թիկունքները:

Փայտահատները կարճ թաց շապիկները հագել են, մերկ ցեխուած ոսներով դուրս են բերում ջրից անսաշ գերաններ, հաստ տախտակներ և հևալով երկաթեայ շղթաները ուսերին քարշում, տանում են վերև.

«Հայ—հույ,» լսվում է անդադար նրանց խոպոտաղակները:

«Հայ—հույ,» կրկնում է խուլ արձագանքը:

Փայտահատների մէջքերը աւելի և աւելի կռանում են, քրախնքը ծածկում է նրանց կիսամերկ մարմինը, ձեռքերի մկանունքները ուռչում են, երկաթեայ շղթան համարեա խրվում է նրանց արևառ ուսերի մաի մէջ և ծանր գերանները շարժում են տեղից:

— Հայ—հույ, լսվում է այդ լծի տակ տնքող մարդկանց աղաղակը:

«Հայ—հույ,» կրկնում է տխուր արձագանքը....

Զառիվայրի ստորոտին երկու մեծ հնացած սօսիների տակ նստած է Շամիրամը: Նրա թուխ երեսի գծագրութիւնը նուրբ է և գեղեցիկ. բարակ աղեղնաձև յօնքերի տակից նայում են երկու խոշոր սև աչքեր երկար խիտ արտևանունքներով. արծուի քթինեղ ոնցները անդադար շարժվում են և ցոյց են տալիս օրիորդի հոգու ալեկոծութիւնը. փոքրիկ բերանի նեղ շրթունքների ծալքերում հազիւ հազ նկատվում են կնձինները. խօսելիս նա ցոյց է տալիս իւր սպիտակ մարդատաշար ատամները. նրա ուսերին ցըիւ են եկել սև ծամերը և օղակաձև գանգուրներով պատել են նրա երկար փղոսկրեայ վիզը. նրա կողքին, յենուած սուենու բորբոնած թփին՝ կանգնած է Արմէնը: Նրա արևառ երեսը, խիտ յօնքերի տակից փայլող մի ներքին, ոուր կրակով աչքերը, նրա ջղային շարժումները ակներև ցոյց են տալիս, որ տեղի ունեցած խօսակցութիւնը ծանրակշիռ է և մօտ է երկու խօսողների սրտերին:

Նա հանել է սաղաւարդը զլիից և անդադար արորում է նրա վերայի սպիտակ երկար փետուրները:

— Մային քեզ սիրում է... Ոհ.. ես զիտեմ այդ.. ինձ ամեն ինչ պատմեց վհուկ Սաթին.. նա ջրի մէջ

ցոյց տուեց քո և Մայիսի պատկերը... այո... նա սիրում է քեզ և դու վերջին ժամանակներս փախչում ես ինձնից...

— Երդկում եմ անմահ աստուածներով, սկսեց Արմէնը, դնելով ձեռը կրծքի վերայ:

— Ոչ... ոչ... մի ստեր և ունայն, իզուր մի երդուիր աստուածների անունով... առաջ դու միշտ որոնում էիր ինձ... գալիս էիր մեհեանները մեծ տօներին, յաճախում էիր մեր պարերը, իսկ վերջերս դու փախչում ես ինձնից... քո սէրը սառել է...

— Ինչո՞ւ... ասա Արմէն...

Այդ «ինչու»ն այնքան պարզ էր և միանգամայն այնպէս սրտանց արտասանուած, որ Արմէնը մի սուր ցաւ զգաց ամբողջ մարմնով, ցնցուեց և առնելով Շամիրամի փոքրիկ, փափուկ ձեռները իւր կոշտացած ձեռների մէջ, արտասանեց վրդովուած ձայնով:

— Իսիր, իմ աղաւնեակս... երբէք դադարած չեմ քեզ սիրելուց... երբէք մի ուրիշ աղջայ պատկերը և գեղեցկութիւնը չէ հրապուրել ինձ... ես քոնն եմ... վաղուց քոնը... բայց...

Եւ նրա ձայնը յանկարծ կտրուեց:

— Բայց... ինչ է պատահել... ասա... ասա... ինձ... ստիպում էր Շամիրամը նայելով ուղղակի Արմէնի աչքերին:

— Ինձ հարկադրում են դառնալ ուրիշի ամուսինը, շշնջաց նա ըոպէական լուսթիւնից յետոյ.

— Հա... հա... հա, լսուեց Շամիրամի ջղային ծիծաղը... հարկադրում են... և ով կարող է հարկադրել քեզ, հարիւրապետ...

— Մեծ Քրմապետը...

Անախորժ լուսթիւնը տիրեց սօսենու տակ: Շամիրամը լուռ էր. նա լայն բացած, շաղ աչքերով նայում էր Արմէնին. նրա երեսի գոյնը գնացել էր. սարսուով անցնում էր նրա մարմնով և նեղ շրթունքները դողում էին.

— Քրմապետը, շշնջաց նա վերջապէս... և, թողնելով Արմէնի ձեռը, կուացած նստաւ խոտերի մէջ:

— Բայց ես կմնամ քեզ հաւատարիմ, իմ նազելիս, արտասանեց Արմէնը և կամեցաւ սեղմել Շամիրամի կուացած զլուխը իւր կրծքին... հաւատա ինձ...

— Ոչ... ոչ... հազիւ լսելի ձայնով պատասխանեց Շամիրամը... քրմապետը... այո... նա... միայն նա կարող է... և այդ ըոպէին նա արձակեց մի այնպիսի ճիչ, որ զետի ափում մինչև անզամ լսեցին այդ աղիողորմ, այդ մաշուած, տանջուած սրտում կուտակուած զայրութի, յուսահատութեան և անզօրութեան պօռթկումը:

Երկու ագուաւ տիսուր կուաւելով թռան անցան սօսենու վրայով:

— Մարեց իմ արկը... զրողը տանում է ինձ, կարողացաւ միայն պինդ սեղմած ատամների միջից արտասանել Շամիրամը և ուշաթափ փռուեցաւ խոտերի վերայ:

Վարդավառի տօնն էր.

Անահիտի, այդ պտղաբերութեան, երկրագործութեան հզօր չաստուածուհու մեծ տօնը:

Կուապաշտ Հայաստանը քանի օր առաջ արդէն պատրաստութիւն էր տեսնում այդ նուիրական օրուայ համար. ջերմեռանդ ժողովուրդը մանաւանդ այս տարի

կամենում էր կարելոյն չափ փառաւոր և շքեղ դարձնել վարդավառի օրը։ Հզօր Անահիտը բարկացել էր ժողովրդի վերայ և ի նշան իւր ցասման կապել էր անձրեւ, դաշտերը, հովիտները դեղնել, չորացել էին. չոր ու ցամաք հողը ճեղքուել էր, տեղատեղ բացուել էր և կարծես ցոյց էր տալիս իւր վէրքերը, իւր ցաւը. հունձ ու կալը չկարողացաւ տալ անգամ ցորենի սերմացուն. քաղցը իւր սոսկալի հետևանքներով սպառնում էր մօտ ապագայում խեղճ ժողովրդին, երկնքում երևացին չարագուշակ նշաններ և խեթը կորցրած ժողովուրդը թափում էր իւր վերջին ճիղը և աշխատում էր զոհերով, նուրիավութեամբ և աղօթքով Անահիտի սիրոը առնել, իջեցնել նրա բարկութիւնը և զայրութը։

Խառնիճաղանձ ամբոխը վաղ առաւօտեան հաւաքուել էր Անահիտի մեհեանը և տեղի սակաւութեան պատճառով լցուել էր պարտիզի ճեմելիքներում, խըռնուել էր աւազանի մօտ, բռնել էր բոլոր նստարանները։ Մեծ քրմապետը քրմերի հետ միասին այսօր պիտի հանէր մեհեանից չաստուածունու անդրին և թափորով պիտի բերէր պարտէզի զլխաւոր մուտքի մօտ և այնտեղ բացօթեայ պիտի կատարուէր ընդհանուր մաղթանքը։

Ժողովուրդը անհամբեր սպասում էր թափորի երեալուն։ Ամենքի ձեռին կային սպիտակ և կարմիր վարդերից հիւսուած պսակներ, փունջեր. նըսնցով պիտի զարդարուէին Անահիտի ոսկեզօծ զւուխը։

— Կրկին անամպ է երկինքը, դարձաւ ժողովրդից մէկը իւր դրացիին... կրկին երկի անձրեւ երես տեսնելու չենք։

— Հզօր է մեծ, անմահ Անահիտը և եթէ կամենայ այս ըոսէիս ծովեր կթափէ Հայաստանի խանձուած դաշտերը, պատասխաննեց դրացին և նայեց երկնքին։

— Ու՞մ արդեօք կտայ այսօր քրմապետը պսակը և ովկանայ կոյսերից քրմուհի Անահիտի, հարցընց մի օրիորդ իւր ընկերուհուց։

— Այդ սըբազան գաղտնիք է և յայտնի միայն մեծ քրմապետին, պատասխաննեց ընկերուհին...։

— Ես գոնէ չէի կամենալ արժանանալ այդ վառքին, ծիծաղով նկատեց օրիորդը... մնալ միշտ կոյս և ամբողջ կեանքը անցկացնել մեհեանի չորս պատերի մէջ... ոչ... ոչ...

— Ի հարկէ... ովկ կկամենայ... կեանքը այնքան գեղեցիկ է... պէտք է ապրել և լիովին վայելել կեանքի բարիքները։

— Այս կտորը որտեղից առար, հարցնում էր մի միջանասակ կին, դիտելով իւր հարևանի դաւշեայ շՊարշը։

— Հրէայ վաճառականից... նա բերել էր և թանկագին օղեր, բայց ամուսինս չ'առաւ, դժգոհ ձայնով պատասխաննեց հարուստ, շքեղ հագնուած կինը։

— Թափորը... թափորը, լսուեց այդ ըոսէին ամեն կողմից։ Մի ակնթարթում խորին լոռութիւնը տիրեց ամենուրէք. ջերմեռանդ ամբոխը, զլխաբաց, ծնկաչոք անթարթ նայում էր այն կողմը, ուր սպիտակ հագնուած քրմերի ուսերին մեղմ տատանվում էր Անահիտի ոսկեզօծ անդրին. հաղարաւոր աչքեր մեխուել էին այդ փոքրիկ ոսկեզօծ զլխին, հաղարաւոր ձեռներ ջերմեռանդ տարածուել էին դէպի նա,

որից կախումն ունէր ժողովրդի կեանքը, նրա չարն ու բարին, նրա ապրուստը. հազարաւոր շրթունքներ արտասանում էին աղօթքի և պաշտամնքի կցկուռ խօսքերը, իսկ նա, այդ փոքրիկ ոսկեզօծ անդրին, անվրդով, խոժոռ գէմքով, դանդաղ շարունակում էր իւր փառաւոր ուղին և մեղմ տատանվում էր երիտասարդ քրմերի ուսերի վերայ. արեի ճառագայթները ընկնում էին Անահիտի ոսկի անդրիի վերայ և վերջինը ցոլում էր պղպղուն, փայլուն ցոլքերով. այդ ցոլքը տատանուելով այս ու այն կողմը կարծես մեծանում էր, փովում էր շուրջը, ողողում էր ծնկաչոր աղօթով ժողովուրդը, ամբողջ պարտէզը, մօտակայ դաշտերը, արար աշխարհը...

Եւ ամեն մէկը բազկատարած ժողովրդից կարծես հաղորդակից էր լինում այդ սրբազն ցոլքին, այդ ահաւոր հրաշքին, որ ահա ակներեւ կատարվումէ ժողովրդի աչքերի առաջ չերմեռանդութեամբ լցուած սրտերը մի ինչ որ կրօնական զառանցանքի մէջ պայթեցին և օդը թնդաց բերկրալից աղաղակներով:

Իսկ ոսկեզօծ անդրին, մեղմ տատանուելով, շարունակում էր իւր ուղին...

Թափորը վերջապէս կանգ առաւ. քրմերը տեղաւորեցին անդրին մի բարձր խորանի վերայ, որի առաջ ոսկեայ եռոտանիներում վառվում էր անշէջ կրակը. հոտաւէտ փոշու ծուխը թանձր քուլաներով բարձրանում էր վերեւ անշարժ օդի մէջ և կարծես թափանցիկ շղարշով պատում էր Անահիտի խոժոռ, լուրջ, անքննին գէմքը. Լսուեց քրմերի սրբազն մեղեղիների ձայնը:

Ժողովուրդը գետին խոնարհուեց և ամենքը մեծ քրմապետից ջոկ ծածկեցին իրենց գուռները.

Կատարվում էր ամենախորհրդաւոր արարողութիւնը և մահկանացուն իրաւունք չունէր տեսնել այդ բոպէին Անահիտի սրբազն գէմքը:

Աստուածուհին ընտրում էր իւր քրմուհին և յայտնում էր նրա անունը մեծ քրմապետին:

Երկար տիրեց այդ լոռվթիւնը. բոպէները դարձան երկար ժամմեր:

Սրբազն երգը դադարեց:

Անմահ աստուածուհին ընտրեց իւր քրմուհին, լսուեց մեծ քրմապետի դողդոջուն ձայնը. Եկ առաջ, Շամիրամ, դուստր Արայի և այս պսակով զարդարիր մեծ աստուածուհու արձանը:

Ամբոխից գլխիկոր դուրս եկաւ Շամիրամը մեռելային սպիտակութիւնը ծածկել էր նրա երեսը. լայն բացուած աչքերով նա նայեց իւր շուրջը, կամենալով կարծես գտնել, տեսնել մէկին, դողդոջուն, անհատատ քայլերով մօտեցաւ մեծ քրմապետին, առաւ նրա ձեռից սպիտակ վարդերից հիւսուած պսակը և նոյնպէս գլխեկոր մօտեցաւ Անահիտի անդրիին:

Արեի ճառագայթները ուղղակի զարկում էին արձանի երեսին և անտանելի էր նայել այդ ոսկու փայլին, այդ ամենուրէք սփոռուղ ցոլքին:

Շամիրամը բարձրացրեց իւր գլուխը. ոսկէ փայլը մի բոպէ հարկադրեց նրան փակել իւր աչքերը:

Անցաւ մի քանի բոպէ:

Նա բացեց իւր աչքերը և ուղղակի նայեց Անահիտի երեսին: Աստուածուհին կարծես կենդանացել էր:

Շամիրամը տեսաւ, ակնյայանի տեսաւ, ինչպէս անդրիի նեղ շրթունքները շարժուեցին և ծոռւեցին ջղածղական շարժումներից:

Անդրին ժպտում էր մի կծու հեղնական ժպտով...  
Մի սուր ցաւ զգաց Շամիրամը իւր կրծքում. Անօդ-  
նական նայեց նա մընող աչքերով իւր շուրջը, նայեց  
ամբոխին և տանելով իւր ձեռը սրտին՝ մի երկար,  
ծանր «ախ» քաշեց՝ և փոռեց գետնին:

Նրա անշունչ դիակի մօտ ընկած էին թառամած  
վարդերը...

1905.



## ԻՆՉ ԷՐ ԵՐԳՈՒՄ ՔԱՄԻՆ...

(Էտիոդ)

Ծննդեան նախատօնակն է:

Լուսնկայ պարզ զիշեր:

Մ... քաղաքի ամայի փողոցներում ազատ փչում է ցրտաշունչ քամին. նա կատաղած մոնչալով բարձրացնում է գետնից ձիւնի սառն փոշին, ոռնալով զարկվում է քարտաշ տներին, փայտեայ խարխուլ ցանկապատներին, բարձրանում է տանիքների, զանգատների ու գմբէթների վերայ, սատանայական պար է պարում այնտեղ, բարձր կամարների տակ, վայրի արագութեամբ իջնում է ցած, փողոց, տեղտեղ զիգում է անազին ձիւնազնդեր և ձիւազային սլալոցով սլանում է դէպի անվերջ, անծայր սպիտակ սաւանով ծածկուած դաշտերը: Քամու սրտամաշ ոռնոցով լցուած է օդը. սրտաճմիկ ողբում է նա տան պատուհանի փեղկերում, լաց է լինում երդիկում, կարի տակ.

Ինչ է այդ ողբը, ում համար... Նստած զրասեղանիս առաջ ես յայտնի լսում եմ քամու ոռնոցը: Ես ձկում եմ զրիչս և ակամայ սկսում եմ ականջ դնել այդ անվերջ սլալոցի սրտամաշ ելեէջներին:

Ծիկ երդիկով քամին իջնում է սենեակս, շվացնում է վառարանիս մէջ. ես զգում եմ նրա սառն, ցուրտ շունչը.

Ու... ու... ու, լսվում է նրա ողբալի ձայնը. չինի՞ սա թշուառների ու անբաղների երգն է...

Այո... այո... այդ կարօտեալների անվերջ միտեսակ երգն է:

Քամու պլոցում ես լսում եմ շղթաների տխուր զօղանչիւնը, լսում եմ թշուառների անէծքը, պարտուածների վերջին, օրհասական հառաչը. և տարապարտուածների ծիծաղը, աներես, անբարոյական ծիծաղը այն ամենի վերայ, ինչ որ սուրբ է և նուիրական ամբողջ մարդկութեան, արար աշխարհի համար...

Մի ըոպէից ականջիս համնում են աղքատների աղիողորմ հառաչանքները, աղքատների, որոնք չոր հացի կարօտ, միշտ կիսամերկ, միշտ քաղցած ապրում են խոնաւ, մութ, խարխուլ որջերի անկիւններում. ես լսում եմ նրանց խոպոտ ձայները, նրանց դանդատները բաղդի գէմ... ես տեսնում եմ նրանց դաշկացած երեսները. օր առաջ աղքատութեան ժանիքների տակ ծերացած գէմքերը, վտիտ մարմինները, նրանց կուցած մէջքերը, կոշտացած, փետացած ձեռքերը և ծակծկոտած կեղտոտ ծուէնները հալ ու մաշեղած մարմինների վերայ...

Օ, որ քան շատ է զրանց թիւր... ինչ խոր վիշտ է զրանց աչքերում, երեսների վերայ, ամբողջ կազմուածքում... Այդ վիշտը, այդ յուսահատութիւնը ծնուել է նրանց հետ միասին և նրանց հետ էլ կիշնի գերեզման...

Ուրախ քրքիչը և ժպիտը—այդ պարգևը երկնից,

երբէք այցելած չէ նրանց այդ կեղտոտ, խարխուլ որջերում և անհոգ ծիծաղը երբէք լսուած չէ նրանց խոնաւ անկիւններում...

Իսկ քամին մռնչում է աւելի կատաղի, աւելի անյագ. Անա կատաղի քիւրդերը սրի ճարակ են անում տասնեակ անպաշտպան, անտէր հայաբնակ գիւղեր. սկ քուլաներով բարձրանում է ծուխը դէպի վեր և հրդեհների բոցը կարծես արիւնով ներկում է յստակ պարզ երկնքը: Արևելքը արեան հոսանքներ է թափում և իւրամբ կոտորում է Քրիստոսի հեաւեռդներին: Ամայի են երբեմն կանաչ դաշտերը, հովիտները, արտերը. լուռ են իրեկ գերեզման. աւեր ու մոխիր են դարձել շէն գիւղերը և այրուած եկեղեցու սկ, մռայլ պատերը սկին են տալիս երկնքի պարզ կապուտակում. Հրդեհած, թալանած տների շէմքում ընկած են սպասաւորների գիակները և գամփոնները լիզում են նրանց վէրքերը: Ազուաները ճոխ ճարակ են տեսել և կուտելով սաւառնում են օդում. արեան հոտով ողողուելու է նոյն իսկ օդը...

Քամին մտել է փեղկերի արանցքների մէջ և ոռնալով շարժում է երկաթեայ ծինիները: Ես լսում եմ նորատի կնոջ խեղդուած հեկեկանքը:

Երիտասարդ, գեղեցիկ, անփորձնա սիրեց մէկին, սիրեց իւր սրտի բոլոր ոյժերով: Իսկ նա խաղալիք դարձեց նրան, ծիծաղեց ու թողեց երեսի վերայ: Եւ այստեղ, այս չվառուած, ցուրտ վերնայարկում խեղճ անիծում է իւր սկ օրերը, ողբում է իւր անկումը, իւր փշուած կեանքը, իւր անինայ, ոտնակոխ արած սէրը...

Եւ արցունքները անզուսալ հոսում են խեղճի

կարմրած, ուռած աչքերից, հոսում են անծայր, անվերջ:

Կդայ մի օր և արցունքի աղբիւրը կցամքի և խեղճ կինը... կհանգստանայ:

Զազիր կարօտը կըզարկէ նրա դուռը, քաղցը և ցուրտը կհարկադրեն նրան վերնայարկից իջնել փողոց և «անբարոյական» կանանց թիւը կշատանայ մէկով...

Եւ ես հասկացայ, ինչ էր երգում կատաղի քամին, ինչ էր և ում համար նրա սրտամաշ ողբը:

Այդ լաց էր լինում արար աշխարհը, լաց էր լինում ամբողջ մարդկութիւնը, որ խեղզվում էր աղքատութեան, անբարոյականութեան և մեղքերի բորբոսնած գարշահոտ ճահճում:

Համաշխարհային վիշտը, համամարդկային կոկիծ ու տառնապանքը այս սուրբ գիշերին բողոքում էին առ Աստուած, առ երկինք:

Աստուած իմ, շնչացի ես զարհուրած, միթէ չարութիւնը աշխարհիս երեսին այնքան հզօր է, որ մարդիկ պիտի տառապեն անվերջ նրա ահաւոր հարուածների տակ և պիտի խեղզուեն ոճրագործութեան և անբարոյականութեան սպանիչ, ժանիքներում...

Միթէ առաջին մարդու մեղքը և նրա Աստուծուց ստացած անէծքը պիտի անվերջ, դարէ դար մնայ համայն մարդկութեան վերայ...

Ես վերկացայ տեղիցս և մօտեցայ պատուհանին: Քամին դադարել էր:

Գիշերուայ ստուերները կովում էին արշալոյսի առաջին, վախկոտ նշոյների հետ:

Աղամայ մութը կամաց կամաց տեղի էր տալիս. առաւօտեան աստղերը երկնակամարում հետզհետէ մարում էին. վառ էր միայն «գիշերային» աստղը. ես երկար նայեցի նրան:

Մեղմ պլառում էր նա բարձունքից:

Եւ ես յիշեցի մի ուրիշ աստղ, որ համարեայ 2000 տարի առաջ ճանապարհ ցոյց տուեց մոգերին դէպի Բեթղեհեմ, ուր ամայի մսուրում, ցնցուիների մէջ, պառկած էր նա, որ աշխարհ էր եկել փրկելու և վերանորոգելու այդ մեղաւոր աշխարհը: Եւ չարը պարտուեցաւ: Խաչուած Աստուածը իւր մահով փրկեց աշխարհը, համայն մարդկութիւնը:

— Հեռու մոայլ մտքեր, բացականչեցի ես՝, հեռու յուսահատութիւն. վերանորոգուած աշխարհը դիմում է դէպի նոր իդէաներ, դէպի ճշմարտութիւն, կդայ ժամանակ և ամբողջ աշխարհը, կատարելով Քրիստոսի պատուէրը, կազատուի մեղքերից և ամեն մէկը մեղանից կախէ իւր ընկերոջը այնպէս, ինչպէս սիրում է ինքը իրեն: Աշխարհիս երեսին կթագաւորեն եղբայրութիւնը և սէրը, ամեն ինչ ներսով, ամեն ինչ իւր մէջ պարուրող սուրբ սէրը:

Մարեց և «գիշերային» աստղը: Արշալոյսը բացուեց և նրա երփներանդ ճառագայթները ներկեցին հորիզոնը մի նոսր, թափանցիկ կարմրագոյն ներկով:



## ԾԱՎԻ ԱՓԻՆ

ԵՐԵԿՈՅ ԷՐ:

Սըհը առաջիս էր իւր վերջին համբոյը աշխարհին.  
Նրա հրավառ ճառագայթները երփներանդ գոյներով  
ոսկեզօծել էին արևմուտքը, մինչդեռ արևելքում երկ-  
նակամարը սկսել էր մթնել և փոքրիկ փետրաւոր  
ամպերը, կուտակուելով միմեանց մօտ հանդարտ լո-  
ղում էին եթերքի անհուն բարձրութեան մէջ. շա-  
ռագունած հորիզոնը փայլում էր բոցավառ կրակներով.  
այդ կրակները երերուն ցոլքերով խաղում էին մօտա-  
կայ սարերի մերկ, ապառաժու գագաթներին, կանա-  
չազարդ լանջերին և մթութեան մէջ կորչող ստորոտ-  
ներին. խաղում էին եկեղեցիների ոսկեզօծ խաչերի  
վերայ, անակների սպիտակին տուող պատերի վերայ,  
անցնում էին անտառը, շառագունելով այնտեղ հսկայ  
ծառերի սաղաւարտները, կանաչ թերթիկները և սև ճիւ-  
ղերը, լուսաւորում էին ամբողջ անտառը մի գերբնական,  
ֆանտաստիկական լուսով և վերջի վերջոյ հասնելով ծո-  
վը, թափվում էին նրա ջրերի մէջ և սկսում էին պաղպալ  
անթիւ, անհամար աստղերի պէս նրա երերող մակե-  
րևոյթին:

Ծովը խաղաղ էր:

Նա կարծես ակամայ, քնաթաթախ ծփում էր իւր  
ալիքները եղերքին, թրջում էր մօտակայ քարերը,

աւազը և կրկին հանդարտ գարճում էր իւր հոսանքը դէպի յետ. փոքրիկ, սեխն տուռով մակոյկները հազիւհազ նկատելի կերպով ճօճվում էին ծովի մակերեսոյթին և միայն սպիտակ ճայիկներն էին, որոնք սլանում էին ծովի վերայով, թրջում էին իրենց թերերը ջրի մէջ և կրկին բարձրանում դէպի վեր:

Ծովը հանգիստ էր առնում, կարծես, յովնած, վաստակած իւր անդապրում կատաղի գործունէութիւնից. նա թմրել, ընկել էր խոր քնի մէջ և քաղցր նիրհում էր. ինչ ոսկի երազներ էր տեսնում ալեզարդ ծերունին, անցեալի որ տխուր, սրտատոչոր փաստերը և տեսիները երևան էին դալիս նրան...

Ծովը լուռ էր: Լուռ քշում էր նա իւր ալիքները յառաջ և յառաջ և աւելի ևս խորասուզվում իւր հանգիստ, խաղաղ քնի մէջ:

Արևմուտքը սկսեց մթնել. արել արդէն բոլորովին թեքուել էր դէպի ծովը. նրա վերջին անզօր ճառագայթները սահում էին ջրի մակերեսյթի վերայով և հետզհետէ կորչում էին հեռու, հեռու հորիզոնի մօտ:

Մութ ստուերները պատեցին երկիրը և ամենին ինչ կորաւ այդ խաւարի մէջ. կորան սարերի զազաթները, վիթխարի ժայռերը, կանաչաղարդ լանջերը, խորհրդաւոր լուռ անտառը իւր հսկայ դարաւով, եկեղեցիների բարձր գմբէթները, ծովի բարձրաւանդ ափին կուտակուած փոքրիկ տնակները և խրճիթները:

Թանձր մշուշը իջաւ ծովի վերայ և կարծես սպիտակ քողով ծանկեց ալեզարդ ծերունուն:

Երկնակամարի անհուն բարձրութեան մէջ վառուեց առաջին սատղը. նրան հետեւց երկրորդը, եր-

բորդը և մի քանի ժամանակից ամբողջ երկնքի կամարը ծածկուեցաւ անթիւ փայլվող աստղերով:

Իբրև հարսնացու, բանալով իւր արծաթափայլ քօղը, դուրս եկաւ ամպերի միջից լուսնեակը և իւր մեղմ, թափանցիկ լոյսը սփռեց սարերի, անտառի, քաղաքի և ծովի անհուն, անծայր տարածութեան վերայ:

Հասաւ գիշերը, հարաւի սքանչելի, կախարդիչ գիշերը:

Կամաց կամաց նօսրացաւ, անհետացաւ մշուշը և օղը, դառնալով աւելի թափանցիկ, սկսեց դողալ արծաթափայլ ստուերներով:

Հրապուրիչ էր տեսարանը, բնութիւնը կարծես օրհնում էր իւր Հրաշակերտող Արարչին. այդ օրհներզը լսվում էր և ծովի մեղմ, կանոնաւոր ծփմունքի և քամու քաղցրիկ մեղեղիի մէջ, և անտառի խորհրդաւոր շվշպում:

Ծովի ափին, մի բարձր, դուրս ցցուած ապառաժի վերայ նստած էր մի երիտասարդ. նրա թոշնած, դակացած դէմքը, խորը ներս ընկած և մի անբնական կրակով վառուող աչքերը, կնճիռները, որոնք պատել էին նրա լայն, մեծ ճակատը, ցոյց էին տալիս նրա հոգեկան զրութիւնը. տխուր էր պատանին. յենուած ապառաժին՝ նա անթարթ նայում էր ծովին և մերթ ընդ մերթ, տանելով ձեռը երեսին, տրորում էր ճակատը և կրկին անզօր վայր ձգում ձեռը: Քամին խաղում էր նրա երկար գանգրաւոր մազերով, որոնք անկարգ թափուել էին նրա հնամաշ, սև լայնեղը զըդակի տակից նրա սրուած ուսերին:

Պատանին բանաստեղծ էր: Մանկութիւնից մի

ինչոր գերբնական ոյժ, մի աստղւածային կըակ վառել էր պատանու սիրտը, և այդ իսկ օրից չունէր հանգիստ այդ խեղճ սիրտը. ամեն ինչ կեանքում, թէ ախուր, տղեղ երևոյթ, թէ լուսաւոր, փայլուն փաստ, խորը արձագանք էր զըտնում նրա սրտում, քամելով նրա աչքերից կամ աղի արցունք, և կամ բերկութեան ուրախ աղաղակներ նրա սիրող սրտից. Աղողոնի ունկեթել, քաղցրահնչիւն քնարը ձեռին, նա լաց էր լինում և արցունք թափում աշխարհիս և մարդկութեան դառն վիճակի վերայ. նա սփոփում էր ձնշուածին, հարստահարուածին, անէծք էր թափում բանակալի վլխին. նա երգում էր սէր, յոյս, հաւատ, եղբայրութիւն. նրա հոգեբուղիս երգերը անցնում էին ծայրէ ի ծայր աշխարհս, ներս էին թափվում շքեղագարդ պալատները, քարուքանդ խրճիթները, ներ ու մութ բանդերը, ուր տառապում էին հազարաւոր ողորմելիներ, թափանցում էին ամենքի սրտի խորքը և քանի մի բողէ ձգում էին մաշող մտատանջութեան մէջ:

Երկար մաքառեց երխասարդ բանաստեղծը աշխարհիս չարկի գէմ, երկար թափեց իւր կըակոտ, այրող երգերը մոլորուած ամբոխի երեսին, երկար, շատ երկար քարոզեց մարդկութեան սուրբ սէր եղբայրութեան, առաջարկեց թողնել լկաի, մեղսալի կեանքը և ձգտել դէսլի կատարելագործութիւն, դէպի լուսաւոր իդէալը, բայց ամբոխը չլսեց բանաստեղծի հրավառ երգերը, չլսեց և սառն ծիծաղով պատասխանեց նրա սուրբ քարոզներին:

Չփատուեց պատանի բանաստեղծը, չկտրեց իւր յոյսը. դեռ լի էր նրա սիրտը գերբնական, աստուածային գօրութեամբ, դեռ չէր ցամաքել քաղցրահնչիւն երգերի աղբիւրը, դեռ վառ էր սրբազն կըակը:

— Զեկան մարդիկ ինձ մօտ, մտածեց նա, ևս ինքս կերթամ նոցա մօտ: Առաւ քնարը ու գնաց: Մտաւ շքեղ ապարանքներ, անվախ կանգնեց մեծամեծների առաջ և թափեց իւր չըթունքներից այրող երգեր, խեղճ զարթեցնող գայլայլիկներ, յանդիմանող խրատներ և անիծախառն հառաչանքներ. Դղրդացին մեծաշուք շինուածների պատերը, լցուեցան հոյակապ դահլիճները սուրբ երգերի քաղցը մեղեղիով, ցնցուեց մեծատունը, գողաց, գունաթափուեց և հրամայեց տալ երգչին, իբրև նուէր, թանկազին զոհարներ և բիւրեղներ:

— Ո՞չ... այդ գանձը քեղ թող մնայ, շնչաց բանասեղծ պատանին, տուր այդ ոսկին նրանց, որոնք հեծում են քո ծանր լծի տակ, տուր նրանց, որոնց արիւնքը պողով վաստակել ես դու այդ գոհարները:

Գերեզմանական լսութիւն տիրեց դահլիճում. լուս, վախեցած կանդնած էին շըջապատողները. զունատ, վրդովուած մեծատունը զապեց իրեն և դարձաւ բանաստեղծին.

— Առ քեղ ուրեմն այս դափնին:

Հեռացաւ պատանին ապարանքից, մտաւ աղքատիկ խրճիթներ և կըկին երգեց իւր հոգեբուղիս երգերը. ամբոխը, անմիտ ամբոխը ապշած լսում էր երգչին և հետաքրքրութեամբ նայում էր նրա ոսկեթել քնարին:

— Սիրեցէք միմիանց, օգնեցէք չքաւորներին, ձըգտեցէք դէպի լոյսը, բաւ է ինչ որ խարիսափեցիք խաւարում, երգում էր պատանին:

Իսկ ամբոխը անմիտ նայում էր նրա թոշնած, դալկացած երեսին և առաջարկում էր նրան հաց, կարծելով որ նա աղքատ է և քաղցած:

Զհասկացաւ պատանուն խաւարամիտ ամբոխը, և դասն արցունքներ թափելով՝ երիտասարդ բանաստեղծը հեռացաւ նրանից և եկաւ ծովի ափը:

Լուսնեակը արդէն բարձրացել էր երկնքում և իւր կաթնագոյն ճառագայթները անդրադարձնում էր ծովի ջրերում: Երկար նայեց պատանին այդ ցոլացող, երերող մակերևոյթին և առնելով իւր քնարը, զարկեց ուժգին լարերին և սկսեց երգել:

Նրա ուժգին ձայնը գեղեցիկ օրօրուող ելմէջներով տարածուեցաւ գիշերային լոռութեան մէջ:

Նրա դրախտային դայլայլիկները լցըին օդը մի այնպիսի դիւթիչ մեղեգիով, որ ամեն ինչ բնութեան մէջ լուռ ու մունջ սկսեց ականջ դնել պատանու երգին. լուռմ էր նիրհած ծովը, լուռմ էին երկնքից փայլ-փլող աստղերը, լուռմ էր խորհրդաւոր լուռ անտառը, լուռմ էին մերկ ժայռերը, լուսնեակը, և նոյն իսկ քամին վախում էր շնչել և քարացած լուռմ էր պատանուն. և իրաւ, գեռ երբէք այպէս զգացուած, այդպէս գեղեցիկ չէր երգել պատանի երգիչը: Զմայլեցուցիչ դայլայլիկները փոխուեցին դառն դանդաների՝ մարդկութեան անսրտութեան, վասութեան դէմ, աշխարհիս անթիւ չարիկների դէմ, աշխարհիս, ուր լաց ու կոծի ձայնը խեղդում, փակում է ուրախութեան բերկրալից աղաղակները, ուր աւելի անէծք է լավում, քան աղօթք, ուր մահը աւելի անձկալի է, քան չարչարող, մաշող կեանքը:

Լուսնեակի լրյուի տակ, կանգնած ապառաժի վերայ, քնարը ձեռին, աչքերը յառած երկնքին, պատանի երգիչը վերջացրեց իր երգը՝ անէծք կարդալով աշխարհի և մարդկութեան վերայ: Ուժգին, կատաղի

որոտաց երգի վերջին հնչիւնը և մարեց հեռու, հեռու սարերի ստորոտում: Պատանին զարկելով ապառաժին՝ փշրեց իւր քնարը և ողբաց:

Սյդ իսկ բոպէին ծովի մակերեսոյթի վերայ երևաց մի գեղեցիկ կին, ոտից զլուխ սպիտակ հագնուած, երկար մազերը թողած մինչ արմունկը՝ նա տարածեց իւր սպիտակ ձեռները դէպի պատանին:

— Եկ... Եկ ինձ մօտ, իմ անձկալիս, վաղուց է սպասում եմ քեզ... ծօ, մարդիկ չեն կարող հասկանալ քեզ... Եկ... իմ կը ծքիս վերայ ողբած քո դառն կոկիծը... իմ փաղաքշանքներիս ներքոյ դու կը մոռանաս քո ցաւերը, քո վիշտը... կը սիրեմ ես քեզ այնպէս, ինչպէս մարդիկ կարող չեն սիրել երբէք... Եկ... Եկ ինձ մօտ:

— Ո՞վ ես դու, բացականչեց պատանին:

— Ես... ես յաւերժանարս եմ... տես... ես սիրում եմ քեզ, իմ անզինս, իմ աստղս... իմ շքեղ պալատում կապրես դու. արեր, լուսնեակը, աստղերը, քամին կը դառնան քո հլու ծառաներդ... չնաշխարհիկ երգեր կերպեմ ես քեզ համար և քաղցրիկ օրօրներ կասեմ, երբ կամենաս քնել իմ սպիտակ կը ծքիս վերայ...

Յաւերժանարս մօտեցել էր ապառաժին, լուսինը լուսաւորում էր նրա գեղեցիկ սպիտակ մարմինը, երկար շագանակագոյն մազերը, մերկ պարանոցը և դէպի պատանին տարածած մարմարինեայ բազուկները:

Մի ինչ որ անհասկանալի, գաղտնի ոյժ մղում էր պատանուն դէպի այդ ծովի գեղեցկուհին, որի խօսքերը, տեսքը, մարմինը խոստանում էին հրապոյը, կիրք և սէր: Նայեց պատանին վերջին սնդամ քնած

քաղաքին, սրաի խորքից ալի քաշեց և նետուեցաւ  
ծովը:

Ելեզարդ ծերունին լուռ ընդունեց իւր գոհը.  
միայն մի բովէ փրփրացին նրա ալիքները, խուլ շլվ-  
շվոցով զարկուեցան ապառաժի բորբոսնած ստորոտին  
և կրկին լուռ, կրկին մունջ սկսան առաջ քշել իրենց  
ծփծփացող ջրերը:



## Ե Ր Ա Զ

Նուէր Սմբատ Շահազիզի 35 ամիայ յոբելեանին:

«Սարսափելի երազ տեսայ այս  
գիշեր».  
Կոմս էմմանուէլ.

— Եւ դու գեռ հաւատում ես, գեռ չես կտրել  
քո յոյսը: Բայց ի՞նչ. դու միշտ պատկանել ես այն  
իդէալիստների շարքին, որոնց ոսկի, խարուսիկ ցնործ-  
ները ու երազները չեն կարողացել փշել նոյն խոկ  
իրականութիւնը, մերկ, սոսկ իրականութիւնը...

Զարմանում եմ. միթէ կեանքը քեզ քիչ ապա-  
ցոյցներ, քիչ փաստեր երեան հանեց. փաստեր, որոնք  
խօսում են ընդդէմ քո կարծիքների և համոզմունքների...

Այդպէս էր ասում իմ ամենամօտ ընկեր ու բա-  
րեկամ բժիշկ Ասլանեանցը, որ յուղուած, կրքոտ ձայ-  
նով և վառելով ծըխաքարշը, սկսել էր ծայրէ ի ծայր  
չափել սենեակս:

Երեկոյ էր. մութն արդէն սկսել էր քօղաւորել  
սենեակիս հեռաւոր անկիւնները և պատուհանի մօտ  
աղօտ լոյսը գեռ շարունակում էր կռուել խաւարի հետ:

Ընդհատուած խօսակցութիւնը կրկին շարունա-  
կուեց:

— Ենթագրենք, Արշակ, որ ես իդէալիստ եմ.  
դա գեռ մահացու մեղք չէ. ի՞նչ արած. ամենքը իս

Քեզ պէս յոռետես լինելու չեն. ինչի՞ կը համանէր մեր՝  
առանց այն էլ անշուք կեանքը, եթէ մարդս չունե-  
նար աստուածային այն անդին պարգևը, որ կոչվում  
է յոյս. յոյսն է, որ սփոփում է մեր ցաւերը, տառա-  
պանքները. յոյսն է, որ կեանքի պատերազմում ճշն-  
շուած, անզօրացած մեր անդամներին տալիս է ոյժ,  
եռանդ. եռանդ ապրելու և կրկին ու կրկին տանելու  
կեանքի խաչը... Եւ դու կամենում ես, որ ես այլ ևս  
չըյուսամ. բայց նա արմատացել է իմ մէջ. նա դար-  
ձել է համոզմունք...

— Համոզմունք. ծիծաղեց Ասլանեանցը, կանդ  
առնելով առաջս. համոզմունք. միթէ մարդկային  
համոզմունքները և կարծիքները դատապարտուած են  
յափունական անշարժութեան: Միթէ դրանք անփո-  
փոխ են. ինչ տարօրինակ բան կը լինէր, ես ու դու  
այժմ քարոզէինք այն, ինչ որ քարոզում էինք 10—15  
տարի սրանից առաջ, երբ դեռ ուսանող էինք և ա-  
պրում էինք, յիշում ես, մեր անսման լուիզա կար-  
լովնայի փոքրիկ անակում. չէ, Պրիգոր, կեանքը, այդ  
միշտ փոփոխող կեանքը փոխում է և մարդուս հայա-  
ցակետերը, և կարծիքները, և համոզմունքները. ինչ  
որ 10 տարի առաջ սև էր մեզ համար և տարօրինակ,  
այժմ նա սպիտակ է և բնական. օրինակ քեզ նոյն  
խել հողագնդի օրգանական կեանքը, որի կազմա-  
կերպութիւնը ըոպէ առ ըոպէ ենթարկվում է պէս-պէս  
և անվերջ փոփոխութիւնների. հաւատա ինձ, ես չեմ  
սխալվում:

— Բնդհակառակը, չարաչար սխալվում ես. դու  
համոզմունքների ձեակերպութիւնը ընդունում ես իբրև  
օրգանական փոփոխութիւն. մի ինչ որ ճշմարտութիւն,

ակսիօմա, կարծիք կամ համոզմունք, եթէ միայն աճում  
է և զարգանում կանոնաւորապէս, երբէք կարող չէ  
փոխուել, ձեակերպուել. սեր երբէք կարող չէ փոխուել,  
ձեակերպուել, սեր երբէք չէ զարմում սպիտակ. հա-  
մոզմունքը, որ փորձերի, մի հնագին շաբք փորձերի  
և զիտողութեան գումարն է, ձուլուելով կեանքի ամեն  
տեսակ փորձերում, շփուելով նրա հազար և մի հան-  
գամանքների ու դիպուածների հետ, դառնում է վերջ  
ի վերջոյ աւելի հասունացած, աւելի լիակատար և  
մօտ զուտ ճշմարտութեան. յետագայ համոզմունքը  
նոր երկոյթ չէ ինքն ըստ ինքեան, այլ միայն նախըն-  
թացի ձեափոխութիւնը: Հիմքը և բաղադրութիւնը  
մնում են առ միշտ միևնույնը...

Արշակը կանգնած էր առաջիս և լսում էր ինձ.  
միայն նրա սուր, միշտ շարժուն աչքերը հաղիւ-հազ  
նկատելի կերպով ժպտում էին, լայն մսալի շրթունք-  
ների ծալքը այնպիսի արտայայտութիւն էր ատլիս  
նրա ամբողջ երեսին, կարծես մի ինչ որ ներողամիտ  
ամբեհրութեամբ լսում լինէր ինձ, չկամենալով կտրել  
խօսքս և զրանով վիրաւորել:

Այդ ժպիտը զայրացրեց ինձ. լոեցի և սկսեցի  
դիմակ պատից կախ արած նկարը, ուր ծովը շատ էր  
նմանում երկնակամարի, իսկ վերջինը իր ամպերով՝  
ալեկոծուղող ծովի:

— Լաւ... թող այդպէս լինի, ընդմիջեց լսութիւ-  
նը Ասլանեանցը, այնուամենայնիւ մենք հեռացանք  
մեր բուն իննդրից... մեր խօսքը մեր ազգի մասին էր.  
իմ կարծիքով նա վաղուց վերջացըրել է իւր դերը աշ-  
խարհիս երեսին. մի երկու, երեք դար՝ և նա պարտա-  
ւորուած կը հեռանայ աշխարհային բեմից... մտաքերնուս

ես... feci, quod potui, facierunt meliora potentes....  
ահա և հայերի այժմեան նշանաբանը... խօ մեռան  
յոյները, հոռվմէացիք, եղիպտացիք, մի շարք ազգու-  
թիւններ, որոնց քաղաքակրթութիւնը, կուլտուրան  
տեղի բարձր էր, քան մեր խղճուկ, երկար դարերի  
ընթացքում չարաչար տառապող հայերինը...

Ապահնեանը տիսուր ժպտաց:

— Ուրեմն դու դատապարտում ես հայերին  
մահուան:

— Այո:

Ոչինչ չը պատասխանեցի: Սենեակում ալիրեց այն  
անախորժ, տիսուր լոռութիւնը, որ միշտ ձանձրացնում,  
նեղացնում է խօսակիցներին:

Արշակը մօտեցաւ զբանեղանիս, վերցրեց այն-  
տեղից հազար անգամ արդէն տեսած մի զիրք, մեքե-  
նայաբար թերթեց և նայելով պատի ժամացոյցին՝  
ասաց:

— Իսկ ժամանակը ուշ է արդէն... ցտեսութիւն,  
Գրիգոր:

— Ու՞ր ես շտապում... մնա... խօսենք մի քիչ:

— Ի զուր է. դա կինի բոլորովին անհետեանք.  
դու կըսնդես քոնը, ես իմը. առաջի անգամը խօ չէ.  
իսկ ես այսօր մի քիչ վատ եմ զգում ինձ... զնամ  
հանգստանամ. բարի գիշեր, Գրիգոր:

— Բարի գիշեր, Արշակ:

Մնացի մենակ:

Ամեն ինչ լուռ է շուրջո. միայն ժամացոյցի  
անվերջ և միակերպ «թիք-թաքն» էր, որ խանդարում  
էր այդ ձանձրալի լոռութիւնը:

Այդ «թիք-թաքը» ազդում էր ինձ վերայ, լարում  
ջղերս, արձճի ծանրութեամբ իջնում էր զլխիս, որո-  
տում էր ականջներում և արձագանք էր տալիս շուտ-  
շուտ բարախող սրառումս. այդ լոռութեան ներգործու-  
թեան տակ անզօր, յենուեցի բազկաթոռիս, կուցը ի  
զլուխս կըծքիս և ընկայ մտածութիւնների մէջ:

Խառն ու շփոթ մաքեր պաշարեցին ինձ և սկը-  
սեցի երագել:

Լապտերի աղօտ լոյսը մեծ շրջանակով ընկնում  
էր զբասեղանիս վերայ, երերուն ստուերներով խա-  
զում էր սպիտակին տուող առաստաղում և չհամնելով  
սենեակիս հեռաւոր անկիւններին՝ թողնում էր այն-  
տեղ ամեն ինչ կիսամութ խաւարում:

— Զէ... չէ... հազար անգամ չէ...

Արշակը սխալվում է, անցաւ ուղեղովս. մենք  
ունենք իրաւունք ապրելու... գեռ հայը չէ կատարել  
այն ամենը, ինչ որ սահմանուած է նրան կատարելու.  
մեր ճրադը գեռ չէ մարել և ես հաւատում եմ, որ  
մի օր նրա լոյսը կրկին կվառուի և կլուսաւորէ մեզ...  
այն, ես հաւատում եմ, ես համոզուած եմ...

Բարձրացը վլուխս, նայեցի շուրջու և կրկին այդ  
մաշող, տանջող լոռութիւնը պաշարեց ինձ իւր պինդ  
ժամնիքներով. ամբողջ կազմուածքիս մէջ զգացի թու-  
լութիւն. ոչ ոյժ, ոչ եռանդ կար այդ բոպէին իմ մէջ.  
կարծես անձնատուր էի եղել անհուն ծովի հոսանքին  
և նրա ալիքները տանում էին, քշում էին ինձ հակա-  
ռակ կամքին՝ հեռու, հեռու: Դարձրի հայեացքս պա-  
տից կախ արած զորդին և անշարժ, ապուշի նման,  
նայում էի նրա գոյնզգոյն նկարներին. միտքս և ու-  
ղեղս դադարել էին զործելուց. դարձել էի անզգայ,

ոչինչ չէր հետաքրքրում ինձ, ոչինչ չէր զմայլեցնում.  
հոգիս թմրել և քնել էր:

Այդ անշարժութիւնը, այդ անդորրութիւնը սիրելի  
էր ինձ,—վախենում էի փոխել դիրքս բազկաթուում,  
վախենում էի շարժուել և այդպիսով վերջ տալ dolce  
far niente-ին:

Աչքերիս կոպերը սկսեցին ծանրանալ. կիսաքուն  
թմրութիւնը պաշարեց ինձ:

— Արշակը յոռետես է... անցաւ ուղեղիս հեռա-  
ւոր անկիւնում:

Նա չունի իդէալներ, գաղափարներ... ոչ... նա  
սխալվում է... Եւ գլուխս աւելի ևս կոսցաւ կրծքիս  
վրայ:

Հազիւ հազ նկատում էի իմ առաջ, սեղանի վրայ  
դարսած առարկաները, լավտերը, լուսանկարները,  
գրքերը, պատից կախ արած պատկերը—այդ ամենը  
պատած էր թանձր մշուշով: Թափեցի վերջին ճիգս,  
լայն բաց արի աչքերս, մեքենայաբար նայեցի շուրջս  
և կրկին ընկայ կիսաքուն թմրութեան մէջ:

Մկանցի մոռանալ ինձ:

Մեծ, լայն, անծայր, անվերջ անապատ:

Դեղնագոյն աւազը առատօրէն փոռուել էր անհուն  
տարածութեան վրայ. դեղին է հողը, դեղին են մերկ  
ժայռերը, դեղին է ողորմելի արօտը, որ աեղ-տեղ  
երկում է աւազի միջից. դեղին է վերջապէս նոյն իսկ  
երկնակամարը, ուր լողում է անապատի կիզիչ արկը.  
Նրա ջերմ, այրող ճառագայթներից տաքացած օղը  
անշարժ է. երբեմն միայն սկսում է խաղալ երերուն  
ստուբներով և կրկին ընկնում է անշարժութեան մէջ:

Քամու թոյլ, անզօր ալիքը, որ ահա փչում է մի բոպէ,  
կորչում է, անհետանում է լայնատարած, մեռած ա-  
նապատում. ոչ մի նշոյլ կեանքի և շարժողութեան:

Փոքրիկ, ալիքաւոր բլրակներ, անհուն անապատ,  
աւազ, կրկին բլրակներ, կրկին աւազ և անվերջ, ան-  
ծայր անապատ, չկայ մի ձայն չըկայ ծպտուն. ամեն  
ինչ քնել է խոր, յաւիտենական քնով աշխարհիս այս  
մեծ, ահաւոր գերեզմանատան մէջ. և ես կամաց-  
կամաց առաջ եմ զնում այդ անապատով: Աւազի հա-  
տերը սպիտակին են տալիս արկի ճառագայթների  
տակ, պսպղում են, փայլում են և ծակոտում աչքերս.  
մեքենայաբար փակում եմ նրան, ընթանում առաջ և  
կրկին բանում. իսկ առաջիս ընկած է նոյն անսպառ  
աւազի ալիքաւոր ծովը:

— Ե՛րբ է զրա գերջը, անցնում է մտքովս. շըն-  
չառութիւնս ծանրանում է. զլուխս սաստիկ սկսում է  
ցաւել. արիւնս խփում է երեսիս:

— Մի փոքր քամի, մի փոքր զով... շշնչում եմ  
ես չորացած շրթունքներովս:

Եւ նայում եմ դեղնագոյն, կարծես խանձուած  
երկնակամարին. արկը թեքուել է արևմուտքին: Նրա  
վերջին, հրաժարական ճառագայթները սկսել են ներ-  
կել անապատը և հորիզոնը կարմրագոյն երփներանդ  
գոյներով. կարմրում է աւազը, կարմրում են բլրակ-  
ները, հեռուում երեսող ինչ որ անորոշ գծագրութիւն-  
ները և արիւնոտ սաւանը կարծես սփովում է անա-  
պատի վրայ:

Օդը սկսում է քիչ զովանալ կամաց-կամաց ցե-  
րեկուայ լոյսը տեղի է տալիս զիշերուայ խաւարին.  
երկինքը մթնում է, ապա ամեն ինչ անհետանում է  
թանձր մթութեան մէջ:

Անապատը կրկին լուռ է: Ես շարունակում եմ ուղիս:

Ու յանկարծ, հեռուից ականջիս համուռմ են խոռվ, անորոշ ձայներ. դոքա աղաղակներ չեն, ոչ, այդ ձայներն աւելի նման են հառաչանքի, սրտատոչոր հեծլանքի:

Շտապում եմ և մի քանի ըստէից մօտենում եմ մի ժայռի, որի գագաթին երկում են աւերակների խարխուլ, փշուր մնացորդներ. ժայռի ստորոտին խըռնուել է մի ամբոխ: Աստուած իմ, ինչ ողորմելի ամբոխ է դա. համարեա կիսամերկ, հնամաշ ցնցոտիներ հագներին, դժգոյն, դալկացած երեսներ... ընկած են գետնին և աղիողորմ հառաչում. շատերը շղթայած են և երկաթը մաշելով նրանց մարմինը, հասել է ոսկըրներին, արիւնաթաթախ վէրքերից հոսում է թարախը. դարեսր վիշտը, հալածանքը, նեղութիւնն ու չարչարանքը քշել, տարել են նրանց երեսից ծիծաղը, ժպիտ:

Նոյն իսկ դժոխքը կարող չէր լինել աւելի ահաւոր, աւելի սարսափելի, քան այս խեղճամբոխը. թշուառների հառաչանքները լցրել են օդը. կաթնագոյն լուսնեակի լոյսը աւելի ևս այլանդակում էր այս ահուելի աեսարանը. ծերունի, երեխայ, կին, երիտասարդ—այդ ամենը խոնուած էր բլբակի ստորոտին և կատաղութեամբ փորելով աւազոտ հողը, կացնում էր իւր ծարաւի չորացած շրթունքները խսնաւ գետնին. Սարսափած կանդ եմ առնում:

— Զնւր... զնւր... մի կաթիլ զնւր... մեռնում ենք ծարաւից. լսվում են աղիողորմ մրմունջներ...

— Զնւր... զնւր...  
Հեռուում, լուսնեակի պսպղուն ճառագայթների տակ ցողում է անապատի դարդ—օազիսը, նրա մակե-

րեոյթը անդրադարձնում է իր մէջ աստղալից մութ կապուտակ երկինքը, լուսնեակը փայլում է շարժուող, երերուն հլւէներով. ամբոխը կարկառում է դէպի նա իր մերկ, թարախոտ ձեռքերը.

— Զնւր... զնւր...

Սարսափիս կամաց-կամաց հետեւում է կարեկցութիւն:

— Աստուած իմ, միթէ սրանք էլ ինձ նման մարդիկ են... ոչ... ոչ.—կրկնում եմ ես ինքս ինձ և մօտենում անձանօթ թշուառներին: Նրանց աղերսապի հայեացքը լնկնում է վրաս և խորը թափանցում սիրաս:

— Զնւր... զնւր... թոթովում է մի փոքրիկ, կիսամերկ երեխայ և իւր նիհար, վատուժ ձեռքերով, փաթաթվում է ծընկներիս:

— Ո՞վ էք դուք... ինչու էք ընկել այս անապատը. հարցնում եմ իմ մօտ ընկած ծերունուն: Լսելով իմ ձայնը, վեր է կենում գետնից, լայն բաց է անում իւր կարմրած, թարախոտ կոպերը, մոլորուած աչքերով՝ վախեցած նայում է վերաս և կրկին թեքում է ալեզարդ գլուխը կրծքին:

Այդպէս նայել, ինչպէս նայեց ինձ ծերունին, գիտեն միայն սարուկները:

— Մի վախենաք... վատութիւն ձեզ չեմ ցանկանում. կ'օգնեմ ձեզ, ասացի ես:

— Օգնել մեզ... ոչ... ոչ... մոմոաց ծերունին և բարձրանալով գետնից՝ նստեց մի մեծ լերկ քարի վրայ:

Լուսնեակն արդէն հեռացել էր հորիզօնից և լողում էր երկնակամարի պարզ, կապուտակ երթերքում:

— Ո՞վ էք դուք, կրկնեցի հարցս ես:

— ՄԵՆՔ... մԵՆՔ... մԵԿ կանչում են «բայեա».  
տէր, մԵՆՔ խեղճ ենք, թշուառ... Աստուած դարձրել  
է մԵզնից իւր երեսը...

— Ո՞ւր էք ապրում դուք:

— Ահա, այստեղ: Եւ նա իր ոսկրոտ ձեռով ցոյց  
տուեց աւերակների քարուքանդ փլատակաները:

— Ինչու էք թշուառ, ապա հարցյրի ես:

— Ինչու... Եւ ծերունին ախուր նայեց երեսիս  
ու ապա բարձրացնելով աչքերը դէպի երկինք՝ ասաց  
դողդոջուն, սրտաճմիկ ձայնով.

— Աստուած բարկացել է մԵԿ վրայ. մԵՐ տան-  
ջանքները սարսափելի են, տէր, մԵՐ դժոխքը այստեղ  
է, այս անապատում... մԵՆՔ մԵՌՆՈՒՄ ենք քաղցից,  
ծարաւից. անապատում շատ քիչ ջուր կայ:

— Ինչպէս... խալ այնտեղ... և ես ցոյց տուի  
հեռուի գետը:

— Ոչ, տէր, դա ջուր չէ, դա անապատի խաբու-  
սիկ երևոյթն է, որ աւելացնում է մԵՐ տանջանքները...  
և ծանր ախ քաշեց:

— Եւ վաղմեց է, որ դուք այսպիսի դրութեան  
մէջ էք:

— Ամբողջ դարեր... Կար ժամանակ, երբ մԵՆՔ  
էլ ապրում էինք աշխարհիս երեսին այնպէս, ինչպէս  
ապրում են ուրիշները: Այդ ժամանակն անցաւ, գնաց.  
կորուսինք մԵՆՔ մԵՐ մայրենի հողը. եկաւ ուրիշը,  
տիրեց այդ հողին և մԵՆՔ դարձանք նրա հպատակը.  
մԵՆՔ հաւատարիմ էինք մԵՐ նոր տիրոջը, մԵՆՔ խա-  
ղաղասէր էինք, մԵՆՔ միխթարվում էինք նրանով, որ  
մԵՐ տէրը թողնում է մԵԿ մԵՐ հողերից մի մասը, մԵՐ  
սուրբ եկեղեցին, մԵՐ հաւատը: Անցան կրկնն դարեր

և ամեն ինչ փոխուեցաւ. մԵԿ սկսեցին հալածել. մԵԿ-  
նից խլում էին մԵՐ քրանքով վաստակածը. մԵզնից  
խլում էին մԵՐ կանայքը, մԵՐ որդիքը, մԵՐ աղջիկ-  
ները: Ծերունին մի բոպէ լուց. անցեալի յիշողութիւն-  
ները երկի վրդովեցին նրա հոգին. նա ծածկեց իր  
երեսը ձեռներով ու սկսեց լուռ լալ. նրա երկար  
սուռերը երերվում էր աւագի վրայ:

— Յետոյ, շարունակեց նա մի քանի բոպէից—  
մԵՐ վիճակը դարձաւ աւելի ևս վատթար. սկսեցին  
քանդել, սրբապղծել մԵՐ եկեղեցիները. արիւնը լայն հո-  
սանքով հոսաց մԵՐ երկրում և ոռոգեց մԵՐ մայրենի  
հողը. ոչ ոք չընկատեց մԵՐ խեղճ վիճակը, ոչ ոք  
չօգնեց մԵԿ. ում ինչ փոյթ, որ աշխարհիս մի ան-  
կիւնում, ուր բնութիւնը դրախտի է նմանում, ուր  
ամեն ինչ կարծես ստեղծուած է անդորր և բարե-  
բախտ կեանը վարելու համար, մի ինչ որ ազգ տա-  
ռապում է դարենը լծի տակ, տընքում է, օրից օր  
մաշվում, հալվում...

Հրդեհեցին մԵՐ գիւղերը, կողոպտեցին մԵԿ և  
վերջ ի վերջոյ սկսեցին մորթել. դարերով լուռ էինք  
մԵՆՔ, դարերով մունջ էինք մԵՆՔ. միայն աղօթքնե-  
րիս մէջ ինչպում էինք Աստուծուց փրկութիւն. իսկ  
մԵՐ Աստուածը դարձրել էր իր երեսը մԵզնից, թո-  
ղել էր մԵԿ...

Կրկնապատկուեցին մԵՐ չարչարանքները, տառա-  
պանքները և մԵՐ դարենը համբերութիւնը հատաւ.  
մԵՆՔ ոյժի և բռնութեան դէմ բանեցրինք ոյժ և բռ-  
նութիւն. մԵԿ խռովարար անուանեցին, քշեցին հայ-  
րենի հողից և ուղարկեցին այս անապատը. սա մԵՐ  
գերեզմանն է, մԵԿ քշել են այստեղ մԵՌՆԵՐԸ և մԵՆՔ

մեռնում ենք քաղցից, ծարաւից...մէր, շատ քչերը  
մեզնից դեռ կենդանի են. կանցնեն տասնեակ տա-  
րիներ և ոչ մի «բայեա» չէ մնալու աշխարհիս երե-  
սին: Մեր ճրագը կըմարի առ միշտ...

Ու լոեց: Լուռ էի և ես: Լուսնեակը քօղաւորուե-  
ցաւ մուգ արձճային ամպերով և ամբողջ անապատը  
իր բլրակներով, աւազով, ժայռերով, տառապող ամ-  
բոխով՝ կորաւ խաւարի մթութեան մէջ...

— — —

Ու զարթնեցի: Սառը քըտինքը թրջել էր ճակա-  
տըս, մարմինս, սարսափած նայեցի շուրջս. վախում  
էի կրկին տեսնել այդ ահուելի, անվերջ, անծայր անա-  
պատը, այդ թշուառներին, լսել նրանց ստաճմիկ մըր-  
մունջները:

Բայց ոչ, սենեակումս էի. ահա լապտերս, գրա-  
սեղանս, ահա ժամացոյցը իր անվերջ թիք—թաքով, ահա  
թղթերս, գրքերս:

— Սարսափելի երազ, շշնջացի ես.... այդ ծե-  
րունին, նրա խօսքերը... ինչպիսի աղիողորմ ծայնով  
նա արտասանեց իր վերջին խօսքերը:

— Մեր ճրագը կըմարի առ միշտ....

Եւ այդ խել բոպէին, չգիտիմ ինչու, մտաքերե-  
ցի մեր խօսակցութիւնը Ասլանեանցի հետ, նրա տխուր  
մարգարէութիւնը:

— Յնորք է, երազ, աշխատեցի ինքս ինձ հանգա-  
տացնել ու մարեցի լապտերս:

Ամբողջ գիշեր մնացի անքուն:

Ծերունու պատկերը չէր հեռանում ինձնից և

ականջումս դեռ երկար-երկար հնչում էին նրա վեր-  
ջին խօսքերը:

— Մեր ճրագը կը մարի առ միշտ...

Միայն լուսաբացին քնեցի՝ անհանգիստ, տենդա-  
լին քնով....

»



11  
ԶՈՒԹԱԿԻ ԶԱՅՆԵՐԸ  
(Էտիւտ)

Նուագահանդէս էր:

Եկուոր հոաչակաւոր ջութակահարի գործիքը վեր-  
ջին անգամ աղերսալից հնչեց, վերջին անգամ՝ նրա  
դառն ողբը, հառաչանքը և կակիծը տրձագանք գտան  
դահլիճի բարձր կամարի տակ և ժողովրդի բուռն  
ծափահարութիւնները սթափեցրին ինձ այն կիսաքուն,  
թմրած զրութիւնից, որը պաշարել էր ինձ նուագա-  
հանդիսի նոյն խոկ սկզբից, երբ մեծ դահլիճում առա-  
ջին անգամ լսուեց ջութակի մեղմ, սրտամաշ մե-  
ղեղին:

Իմ գեղեցիկ ոսկի երազը կորաւ, անհետացաւ:

Ես նայեցի բեմին:

Ամբոխը բարձրաձայն յայտնում էր իւր հրձու-  
անքը, իւր երկրապագութիւնը՝ նրան, որի առասպե-  
լական գործիքը ստիպեց ինձ մոռանալ և ժամանակը,  
և տեղը, մոռանալ ամբողջ իրական աշխարհը:

Իմ «Ես»ը ամբողջովին սաւառնում էր մի ուրիշ  
աշխարհում, ուր տիրում էր գեղեցիկ հնչիւնների և  
մեղեղինների քաօոր:

Աստուած իմ, որքան զմայլեցուցիչ տեսիլներ պատկերացան իմ առաջ այդ մեղեղիների ներգործութեան տակ. մերթ ողբալի, ինչպէս ինքը դառն կսկիծը, մերթ լի սիրալիր հրձուանքով և խաղաղ անդորրութիւնով ու նիհրով, ինչպէս խաղաղ են ու նիրճոտ հրաշալի արևելքի աւելի հրաշալի զիշերները և մերթ մոայլ ու խոժոռ, ինչպէս մոայլ են միջնադարեան կիսակործան ամբոցների ահոելի փլատակները...

Իմ առաջ հերթով անցնում էին այդ հրաշալի տեսիլները, պատկերանում էին այնչափ իրական, այնչափ կենդանի, որ ես կարծես տեսնում էի նրանց, զգում էի նրանց գոյութիւնը:

Իմ հողին, իմ սրտի ամենախոր ծալքերը ընթառ էին դէպի այդ դիւթիչ տեսիլները, ընթառ էին կատաղի, անզուսպ....

Ես ապրում էի նրանց ներքին կեանքով, նրանց զզացմունքներով: Ես լաց էի լինում, ես ողբում էի չութակի հնչիւնների հետ միասին, ես պաղատում էի, աղերսում էի փրկութիւն ու թողութիւն, ես շշնջում էի սիրոյ, խստումների, կշտամփանքների և անէծքների կցկտուր խօսքերը:

Զութակահարը վաղուց վերջացրել էր նուագելը, ամբոխը ցրուել էր, իսկ իմ ականջներում դեռ հնչում էր մեղմ, ինչպէս տանջուած հոգու աղօթք, Շօպէնի Nocturne մեղեղին, հրձուալից ինչպէս յաղթողի ուրախ աղաղակ, կօնդակու մազուռկան և նոյն իսկ իւր վայրենութնամբ գեղեցիկ կովկասի լեզգինկան...

Ես յողնած էի զգում ինձ, ծանրաբեռնուած այդ հնչիւնների և մեղեղիների քաօսից:

Սուրբ աղօթքը, անձայն մրմունջը փոխվում էր

կատաղի անէծքի, անզուսպ, կրակու սէրը—աղեղսանքի և այդ շարունակ ելեէջսերը, այդ փոփոխութիւնները մաշեցին իսպառ իմ հոգին:

Ես անհաստատ քայլերով, երերալով, զիմեցի զըլիսաւոր մուտքին և մեքենայաբար վերցնելով ծառայի ձեռից վերարկուս, զիսարկս և ձեռնափայտս, դուրս եկայ փողոց:

Աշնանային գիշերը սքանչելի էր: Անամպ երկն ակամարում դանդաղ լողում էր լուսնեակը և նրա մեղմ, սպիտակին տուող լոյսը, ընկնելով սալայատակի սրուած քարերի, տների պատերի և քնած ծառերի անշարժ տերևների վերայ, ամեն ինչ լուսաւորում էր երերուն, արծաթափայլ շերաերով: Քաղաքը քնած էր և զիշերային լուութեան մէջ երբեմն-երբեմն տարածվում էին խուլ, անորոշ ձայներ:

Զով քամին փչեց երեսիս և մի քիչ հանգստացրեց իմ գուգուուած ձղերս:

Ես շտապով շարունակեցի ուղիս. մեղեղիների, հնչիւնների և երգերի քաօսը գեռ հնչում էր ականջումս: Ես չէի կարող ազատուել նրանցից: Նոքա հետեւում էին ինձ, նոքա խրուել էին ուղեղիս ամենահեռաւոր ծալքերի մէջ և անզագար, հնչում էին հակառակ իմ կամքի, ինչպէս քամուց հնչում է էօլի տաւիղը:

Զգիտեմ ինչու, այդ հնչիւնները յիշեցրին ինձ իմ հեռաւոր անցեալը, իմ կեանքի ամենալաւ օրերը, իմ անցեալի վաղուց վշրուած իգէալները, իմ ձգտում-

Աերը դէպի բարին, դէպի կատարելագործութիւն, ձգումներ, յաւիտեան թաղուած կեանքի ալեկոծ ծովի մութ խորքում. Այս, այն ժամանակ, այն անցած գնացած օրերում կար ինձանում սէր և յոյս և հաւատ:

Այն ժամանակ ես հաւատում էի, որ մարդիկ եղայր են, որ երկրիս վերայ գոյութիւն ունի բաղդը. հաւատում էի, որ բարին միշտ յաղթում է չարին և լուսափայլ արշալոյսը կփոխարինէ մութ, մոայլ գիշերը: Մի անկնթաթում ամբողջ իմ անցեալը պատկերացաւ առաջս իւր բոլոր մանրամասն բովանդակութեամբ:

Ես զգացի ինձանում մի նոր, անձանօթ ոյժ և անգործութիւնը, պարզ մանկական հրճուանքը տիրեց ինձ:

Ես կարծես կրկին դարձայ երիտասարդ, կարծես ձգեցի վերայիցս անցած գնացած. օրերի, տանջանքների և անվերջ հիասթափութեան ծանր ու դառն բնուր:

Երկնային հնչիւնները կրկին կենդանացրին իմ կորուսած իդեաները, իդեերը յոյսերը և իմ սրտի, իմ հոգու ամեն մի լարը դողաց բերկրալից հրճուանքից:

Այս, այդ ըսպէին ես ուրախացայ իմ վերածնութեանը, իմ յետ դարձած անցեալին, ուրախացայ, ինչպէս ուրախանում է խեղճ բանդարկեալը, տասնեակ տարիներ հալ ու մաշ եղած, մութ բանդի խոնաւ որչիւրում իւր ազատութեանը, ինչպէս ուրախանում է իւր հայրենիքից անջատուած պանդոխտը, երբ կրկին տեսնում է հայրենի հողը, իւր ընտանիքը:

Այդ հնչիւնները ազացուցին ինձ, որ դեռ մե-

ուած չէ բոլորավին ինձանում այն հեռաւոր, անորոշ, իբրև երազ, անցեալը, երբ ես տեսնում էի կեանքի նպատակը և կեանքի միաբը, նրա ներքին բովանդակութիւնը, երբ շատ հեշտ, տուանց տարակուսանքի որոշում էի չարն ու բարին, գեղեցիկը և վեհը, վատից, ստորից, կեղտից, երբ ամբիծ խիղճս տպատամբում էր որ և է բռնութեան, ստի, խարէութեան և չարիքի գէմ և հոգիս, ամբողջ իմ «Ես»ը անգուսպ սլանում էր գէպի սուրբ երիտասարդութեան սուրբ իդեալները....

Կեանքի ուղին, թւում էր ինձ այն ժամանակ, զարդարած է վարդերով և ես հպարտ և ազատ դիմում էի առաջ և առաջ... բայց անցան տարիներ, երկար տարիներ: Անցած անգոյն, միակերպ, տաղտկալի: Իմ պատանեկան ոսկի խափուսիկ երազներս անհետացան իբրև ծուխ կեանքի մթնոլորդում:

Կեանքի բաժակը ես արդէն ըմպել էի և նրա տակը ես գտայ ազու գառնութեան միայն. գեղեցիկ, հոտաւէտ վարդերը թառամեցին, մնացին միայն փշերը և տատասկը..

Իմ կեանքի լուսասու աստղը մթնեց, զլորուեց.. Մտածին կեանքս դարձաւ մի ողբալի, աննպատակ կեցութիւն օրէ ցօր,

Տարուց տարի կեանքի սասնամանիքը սպանեց իւր մահաբեր սառն շնչով իմ յոյսերը, իմ հաւատը, իմ սէրը:

Այդ անսակընկալ ցուրաը կաշկանդեց ինձ, իմ կեանքական ոյժերը և ես, իբրև զիակ, զլորում էի օրէ ցօր աւելի և տելի ցած, ընկնում էի մոայլ անդունզը:

իմ մտքերը, կարծիքները, համոզմունքները, — ամեն ինչ խառն ու շփոթ էին. բարին դարձա չար, իսկ չարը—բարի:

Խղճիս խայթոցները, խղճիս երբեմն զօրեղ ձայնը լոեց, մարեց:

Սուտը, խաբէութիւնը, բռնութիւնը, մեղքը այլ ևս չէին տակն ու վրայ անում իմ կոշտացած, կեանքի ցեխով ծածկուած հոգիս և սիրտս: Ամեն մի տղեղ երեսյթի վերայ ես նայում էի սատնասիրա կերպով Մարդիկ, որոնց ես առաջ անուանում էի «Եղբարներ», դարձան ինձ համար թշնամիներ, անխիղճ, վայրենի հակումներով էակներ:

Նոյն իսկ կեանքը, չգիտեմ ինչու համար, սկսեցի ես անուանել «կոխ ապրուստի համար» ևոչ թէ դոյտթեան համերաշխութիւն...

Եւ յանկարծ ջութակի հնչիւնները, այդ երկնային մեղեղին, յիշեցրին ինձ իմ անցեալը, ստիպեցին կրկին զգալ այդ գեղեցիկ, անցած զնացած օրեւրը... մնացել էր ուրեմն սրառումս, նրա ամենահեռաւը, ամենախոր ծալքերում մի ամբիծ, մի մաքուր անկիւն, յստակ իբրև սրբութիւն սրբոց, ուր ճանապարհ գտան, անցան այդ հնչիւնները և շնչացին հաւատի, յստի և սրիոյ վեհ խօսքերը:

Հսաարակ փայտի կտորը, մի ջութակ քանքարաւոր արտիստի ձեռքում ստիպեց ինձ ապրել զոնէ մի քանի ըռպէ հեռու, լուսաւոր անցեալի դեղեցիկ կեանքով:

Գրասեղանիս վերայ գետեղուած լապտերը հանգչելու

վրայ էր, նրա աղօտ, երերուն լոյսը լուսաւորում էր միայն սեղանի կանաչ մահուղը, գէս ու դէն ձգած վրքերը, լուսանկարները, հազիւ հաղ համուռմ էր առաստաղին և մթութեան մէջ էր թողնում սենեկիս անկիւնները:

Ես անշարժ նստած էի զրասեղանիս առաջ և մտածում էի: Բայց ոչ, դա մի շարունակ լոգիկան մտածութիւն չէր. դա մտքերի խառն ու շփոթ այն հոսանքն էր, երբ փաստերը, վաղանցիկ տպաւորութիւնները ծնվում են մի ակնթարթում մարդու ուղեղի մէջ և իսկոյն փոխվում են նոր մտքերի, նոր տպաւորութիւնների, կրկին երեան գալիս, կրկին անհետանում...

Ակամայ ես համեմատում էի իմ անցեալը ներկայիս հետ և խիղճս աւելի և աւելի բարձր բողոքում էր վերջնի դէմ: Ես աշխատում էի գանել արդարացուցիչ պայմաններ, ապացուցանել, որ բարոյական անկումս հետևանք է և բնական հետևանք իրական կեանքի հոսանքի և պահանջների և...ի զուր...ես անգօր էի. Խղճիս խայթը տանջում էր ինձ:

Դու կարող էիր լինել մի այլ, ուրիշ մարդ... մեղքը քոնն է. անդադար շշնջում էր մէկը ականչիս...

Եւ ես կրկին տառապում էի, կրկին տանջում. հոգեպէս: Ես զգում էի մարմնիս մէջ մի սարսուռ, մինչդեռ զլուխս այրվում էր տաքութիւնից և շրթունքն չորացել էին:

Ես վերկացայ տեղիցս և սկսեցի չափել սենեակս: Մութը գարձել էր աւելի թանձր և լապտերի հազիւ պլառող լոյսը ընկնում էր միայն սեղանիս վերայ

մի աղօտ շըջանակով: Ես յոգնած ընկայ բաղկաթոռիս  
մէջ և նիրհը պաշարեց ինձ:

— Ով դու, ամբաղդ, ննչեց մի մեղմ, սրտագին  
ձայն մթութեան միջից: Ես բարձրացրի զլուխս և ան-  
սայ մի հրաշալի էակ:

Գեղեցիկ, լուրջ և թախծալից մի երես նայում  
էր ինձ իւր անմեղ աչքերի թափանցիկ հայեացքով:

Գեղեցիկ զլիի կարծես օդային գծագրութեան  
համապատասխանում էր նրա նեղ, երերուն իրանը,  
նրա երկար ու բարակ, կարծես տաշուած ձեռները  
և հազիւ հազ նկատելի մթի մէջ սաները:

Երկար սպիտակ պատմուճանը լայն ծալքերով  
ընկած էր նրա ուսերի և կրծքի վրայ և ծածկելով  
սաները, փռուել էր գետնին:

— Ո՞վ ես դու, ի՞նչ ես կամենում ինձնից, շշնջա-  
ցի ես ան ու դողի մէջ:

Մնձանօթ էակը մօտեցաւ ինձ, կարկառեց իւր  
գեղեցիկ ձեռը և լուրջ պատասխանեց.

— Ես բարին եմ, ես եկել եմ քեզ մօտ և զոհ եմ  
պահանջում:

— Զոհ.. ինչ զոհ.. և ումի՞ց

— Եւ դու դեռ հարցնո՞ւմ ես:

Եւ անծանօթ էակի երեսը դաձրաւ աւելի լուրջ,  
աւելի թախծալից:

— Ես զոհ եմ պահանջում. քաւիր մեղքերդ. այս..  
զարկեց քո օրհասական ժամը: Այս օր երկար տարի-  
ներից յետոյ քո սիրալ կրկին մատչելի դարձաւ ինձ  
համար, բարութեան և սրբութեան համար. վաղուց  
դու, ով ամբաղդ, դարձրել էիր քո երեսը ինձանից:

Երկար թափառում էիր դու գիշերային խաւարի մէջ,  
կորցնելով ճշմարտութեան ուղին և ահա այսօր, եր-  
կնային երգը, թափանցելով քո կոշտացած սրտի խոր-  
քը, յիշեցրին քեզ քո վաղանցիկ, ոսկի օրերդ

— Ոհ իմ անցեալը, բացականչեցի ես և զգացի  
սրտում մի սուր ցաւ:

— Այս, քո անցեալը, այն օրերը, երբ դու ձանա-  
չում էիր, երկրապացում էիր ինձ և ես փայլում էի  
քեզ համար իբրհ քո կեանքի լուսատու աստղը, քո  
փրկարար փարսուը.. Տեսնում ե՞ս, ես կրկին եկայ քեզ  
մօտ, թէն վաղուց դու հեռացել էիր ինձնից, բնաւ  
մոռացել էիր ինձ...

Ինչո՞ւ.. ինչո՞ւ.. այդպէս վարուեցար դու.. Ես փա-  
ղաքշում էի քեզ, երբ դու, անմեղ մանուկ, զեռ պառ-  
կած էիր օրօրսցումդ, ես փայլում էի քո մանկական  
աչքերում, քո անմեղ ժայռում, երբ դու քո անզօր,  
փոքրիկ ձեռներով փաթաթվում էիր քո մօր վզին: Ես,  
կռացած քո օրօրոցիդ, ոսկի երազները բաշխում էի  
քեզ և դարձել էի քո պահապան հրեշտակը: Անցան  
տարիներ, դու մեծացար: Ես առաջնորդում էի քո  
առաջին, պատահեկան քայլերով, ես թելադրում էի  
քեզ քո յստակ անմեղ ցանկութիւնները:

Յանուն իմ դու գործում էիր, կռվում.. Յանուն  
իմ դու սիրեցիր ամբողջ մարդկութիւնը, մանաւանդ  
յսեղճերին, ընկածներին, ամբաղդներին: Նրանց ար-  
ցուները, նրանց կակիծը դարձաւ քո կակիծը, քո  
անձնական տանջանքը: Դու մոռանում էիր քեզ, քո  
«Ես»ը և օդնում էիր նրանց... Օ, այն ժամանակ դու  
ճանաչում էիր ինձ, հաշտ ապրում էիր ինձ հետ և  
այն ժամանակ դու մեծ էիր: Այն սերմը, որ ես

ձգեցի քո սրտում, չկորաւ: Նա գտաւ իւր պարաբռ  
հողը և ծլեց: Ես ուրախացայ, ես ցնծացի և տօնում  
էի իմ յաղթանակը. երբ... էակի մեղմ, սրտազին  
ձայնը յանկարծ դողաց, կտուեց և նրա դէմքը, այդ  
աստուծային դէմքը, դարձաւ տխուր մոայլ.

— կեանքի ցուրտը փչեց քո երեսին, նորածիլ  
սերմը քո սրտում սառեց, կորաւ և լոյսը տեղի տուեց  
մոայլ խաւարին: Երկար, շատ երկար թափառեցիր  
դու այդ խաւարում, մոռացար քո իդէաները, մոռա-  
ցար քո խեղճ, երեսի վերայ թողած եղբայրներին:  
Դու խլացար և նրանց աղիողորմ հառաչանքները,  
նրանց լաց ու կոծը չէին համում այլ ևս քո ական-  
ջին: Դու ձգեցիր քեզ կեանքի, շլացնող, արտաքուստ  
միայն ցոլացող կեանքի կստաղի հոսանքի մէջ. և իր-  
ու ծարաւի անզուսպ սկսեցիր ըմպել կեանքի դու-  
արձութեան բաժակը: Դու սկսեցիր ապրել միայն քեզ  
համար և օր չար «ես»ը տարաւ իւր յաղթանակը:  
Ուրիշ մի կին դարձաւ քո աստուածը, քո կուռքը: Դու  
երկրապազում էիր միայն նրան, նրա առաջ ազօթում  
և խունկ ու զմուսս ծխում: Զարը փոխարինեց ինձ:  
Ես, յաղթուած էի: Ես ողբում էի, ես, կորցնելով  
քեզ, տանջվում էի անասանելի տանջանքներով.. բայց  
միշտ յոյս ունէի, որ մի օր կգտնեմ քեզ կրկին դու  
կդանաս խմը և ահա դու վերադարձար վերջապէս..  
դու ճանաչեցիր ինձ.

— Այո... այո ես ճանաչեցի քեզ, բացականչեցի  
ես ուրախ ու զուարթ, դու էիր, որ երբեմն, կեանքի  
ամենադժուար բոպէներին, սփոխում էիր ինձ և ոյժ  
տալիս.. դու էիր իմ կեանքի նպատակը. դու այն  
ամեն յատակ, մաքուր, լուսաւորն էիր, ինչ որ կար

իմ կեանքում... այո... ես ճանաչեցի քեզ:

— Եւ դու կրկին իմն ես, շարունակեց նա, թող  
ուրեմն քո այդ պիղծ, կեղտոտ կեանքդ, որ նուիրուած  
է միայն մամօնային ու չարութեան և կրկին զնա-  
բարութեան ու ճշմարտութեան շաւզով: Նա ծանր է,  
փշոտ, բայց առաքինի: Քրիստոսի խաչն էլ ծանր էր,  
բայց նա վերցրեց նրան իւր ուսերին և փրկեց աշ-  
խարը: Առ, իմ որդեակ, և դու քո խաչը և եկ ինձ  
հետ կուռելու չարութեան դէմ: Գնա դէպի լոյս, դէ-  
պի բարին, դէպի սուրբ ճշմարտութիւնը և դու կրր-  
կին կդառնաս մեծ: Տես քո եղբայրները, քո քոյրերը  
չարաչար տանջվում են, նոքա անօթի և ծարաւի են,  
նոքա խեղճ են, սրտաճմլիկ աղերսում են քո օգնու-  
թիւնը և կառկառում են դէպի քեզ իրենց ոսկրտա,  
չորացած արխանաներկ, դողգոյուն ձեռները... մի  
ձկիր նրանց առաջ հացի փոխարէն քար և մի դար-  
ձնիր քո երեսը այդ ողորմելիներից... նա մօտեցաւ  
ինձ աւելի ևս և նրա շունչը գիպաւ երեսիս:

— Եկ ինձ հետ, շշնջաց նա և կրկին քո փայ-  
լուն, սակի անցեալով կվերադառնայ, կրկին կճանաչես  
դու Աստծուն և Աստուած կապրի քեզում...

Նա թերուեց դէպի ինձ, փաղաքաբար նայեց ինց  
և իւր փոքրիկ ձեռներով սեղմեց իմ ձեռը: Այդ բո-  
պէին սենեակիս միւս անկիւնում լսուեց մի բարձր,  
կծու ծիծաղ: Ես ցնցուեցի և վերկացայ տեղիցս: Իմ  
առաջ կանգնած էր կիսամերկ մի կին: Նրա երեսը  
փայլում էր մի տափոտ գեղեցկութեամբ և զգայական  
հրապոյրով:

Նրա խոշոր, այրող աչքերը հեղնօրէն նայում էին  
ինձ և նրա մերկ, սպիտակ, մարմարնեայ կուրծքը,

Իսկ չար ողին աւելի պինդ սեղմվում էր ինձ. Ես զգում էի երեսիս վերայ նրա տաք շունչը. նրա կրակոս շրթունքները դիպչում էին իմ շրթունքներիս և նրա ձեռները փաթաթուել էին վզովս:

— Ո՞չ... ոչ... մնա ինձ հետ, իմ սկրելիս...

— Յիշիր ջութակի հրաշալի մեղեղին... կրկն լսուեց սենեակիս անկիւնում, յիշիր...

— Թոնդ ինձ... թող... նա, բարի ողին, կանչում է ինձ... և ես պիտի գնամ, բացականչեցի ես աշխատելով ազատուել չար ողու գզուանքներից. Բայց այդ բոպէին նրա շրթունքները դրոշմեցին իմ չորսցած շրթունքներիս վերայ մի երկար, երկար համբոյը: Արհւսս խփեց դիմիս, աչքերս մթնեցին և իմ ականջներիս հասաւ մի սուր ճիչ, մի յաղթական ծիծաղ...

Դա ծիծաղում էր չար ողին:

—

Ես դարթեցի: Գրասեղանիս լապտերը վաղուց մարել էր: Սենեակում ոչ ոք չկար:

Պատուհանից նայում էր արդէն արշալոյսը... հեռու հօրիզոնը ծածկուել էր երիներանդ ցոլքերով:

## ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

Ես ծնուել եմ հեռու, շատ հեռու տեղ... իմ հայրենիքի երկինքն այնպէս կապուտակ, այնպէս պարզ էր և ամբողջ բնութիւնն այնպէս շքեղ, այնպէս հրաշալի... Մարդիկ հայրենիքս իտալիա են կանչում: Այստեղ տեսայ ես առաջին անգամ ջերմ արեգակի այրող ճառագայթները, այստեղ առաջին անգամ ես ծծեցի զով, հոսաւէտ օդը, այստեղ առաջին անգամ պարտիզանի ձեռքը սկսեց մաքրել ինձ փշերից և տատասկներից:

Ես մեծանում էի վենետիկի քաղաքային պարտիզում ուրիշ վարդերի հասարակութեան մէջ՝ անվրդով և խաղաղ, մեծանում էի հօրս և մօրս հսկողութեան տակ:

Այդպէս երջանիկանցան իմ մանկութեան առաջին օրերը... Շատ անգամ ես լսած եմ, թէ ինչպէս մարդիկ գանգատուել են, որ աշխարհումս յաւիտենական ոչինչ չկայ, և այդ, իմ կարծիքով, շատ ուժիկ է, գոնէ ես ինքս ստուգեցի մօտ ապագայում այդ

Խօսքերի դառն ճշմարտութիւնը:

Մի օր երկինքը սովորականից աւելի պարզ էր, աւելի գեղեցիկ. արեգակը երկնակամարից լուսաւորում էր երկիրը, ոդը լցուել էր հազար ու մէկ ծաղկների հոտաւէտ բուրումներով. թոչուններն ուշախուրախ թոչկոտում էին ծառից ծառ և բարեւում այդ գեղեցիկ օրը: Վարդ մայրս այդ միջոցին թեքուել էր իմ կողմը և նրա շրթունքներն արտասանում էին սիրոյ խօսքեր...

Յանկարծ մեր ընդարձակ պարախիցի դռները բացաւեցան և ներս մտաւ մի օրիորդ. նրան ուղեկցում էր մի երիտասարդ պարոն. հազար ու մէկ ողջոյններով նրանց հետեւում էր մեր ծերունի Անտօնիօ պարտիզանը:

Օրիորդը ժպտալով սնց էր կենում առջեիցս:

— Ա՞ս, ինչ սիրուն վարդ է, ասաց նա, ցոյց տալով մօրս վրայ... տեսէք, էրնեստօ, դարձաւ նա երիտասարդին:

— Այս, օրիորդ, պաասախանեց վերջինը, արժանի է, որ այդ վարդը զարդարէ ձեր կուրծքը: Անտօնիօ, դարձաւ նա ծերունի պարտիզանին, կըտքիր այդ վարդը:

Եւ մի ըսպէից յետոյ Անտօնիօ պարտիզանի կոշտ, խորշումած ձեռքը կարեց մօրս կեսնքի թելլ: Ես սարսափած նայում էի այդ մարդկային անխղճութեանը:

Մայրս հազար ու մէկ վարդշանքներով աշխատում էր շարժել պարտիզանի գութը. նա խնդրում էր շնորհել իրան կեանք, նա ասում էր, որ ինքը ոչոքին վնաս չէ բերել... Բայց իդնւր... անդութ, ան-

խիղճ Անտօնիօն չլսեց մօրս աղերսամնքին. նա քաղեց մօրս և առւեց երիտասարդին...

Վերջապէս ես կամաց-կամաց ուշքի եկայ. նայեցի շուրջս և տեսայ, որ մնացել եմ որբ, միայնակ այն ընդարձակ պարտիզում, բոլորովին միայնակ, նայեցի... և տրամեցայ. ցօղի միակ կաթիլը, որ գեռչէր ցամաքել արևի ճառագայթներից, այժմ վրայիցս գլորուեց գետին...

Դա իմ արտասունքն էր...

Ես այդ ըսպէին միայն հասկացայ, որ աշխարհում յաւիտենական ոչինչ չկայ և որ մարդիկ անխիղճ են, սասափիկ անխիղճ. կարելի է այդ նրանից է, որ նրանք անկարող են հասկանալ ծաղիկների, բոյսերի, թոչունների լեզուն, նրանց խօսակցութիւնները, նրանց լացը և ուրախութիւնը... եթէ հասկանային, երևի, չէին խլիլ մեզնից մեր անվնաս, անմեղ կեանքը:

### Բ.

Անցաւ քանի մի տարի: Այդ միջոցին ես արդէն դարձել էի մի հին, ծերացած վարդենի, սկսել էի սերմեր տալ, ունէի զաւակներ, թոռներ...

Այս ընտանեկան անդորրը խաղաղութեան և բախտաւորութեան մէջ ես սկսել էի մոռանալ մօրս անժամանակ՝ վաղեմի մահը, սկսել էի մոռանալ ծերունի Անտօնիօ պարտիզանի անդութիւնը՝ ներել էի նրան...

Ես նորից թոյլ էի տալիս, որ Անտօնիօն ամեն առաւօտ սառը, մաքուր ջուր սրսկէ ինձ վրայ, մաքը է իմ հողը, հեռացնէ արմատներիցս տատասկը և

անպէտք կանաչեղէնը...

Այսպէս անցնում էին օրերս. ես բախտաւոր էի, սիրում էի զաւակներիս, թոռներիս, նրանք նոյնպէս սիրում էին ինձ. ես բախտաւոր և երջանիկ էի:

Մի օր արել երկար չէր երկում երկնակամառում. օդը սկսել էր ցրտել. ծառերն արդէն մերկացել էին, կանաչեղէնը գեղնել, թառամել էր և ամբողջ բնութիւնը կարծես պատրաստվում էր քնել խոր, մեռելային քնով:

Արմատներս սկսել էին սառել, թերթիկներից շատերն ընկել էին և ծածկել գետինը. ես մրսում էի. զգում էի, որ մօտենում էր ձմեռը:

Անտօնիօն սկսեց իր սովորական գործը. նա մեզանից շատերին ծածկեց յարդով, շատերին տարաւիր բնակարանի մեծ ու տաք սրահը, իսկ ինձ իմ ընտանիքովս փորեց, հանեց գետնից և տեղաւորեց մի մեծ արկղի մէջ. այնտեղ ածեց նա մի քիչ հող, ջուր սրկսեց և տարաւ քաղաքի հիւրանոցներից մէկը:

— Ահա, օրիորդ, ես բերեցի ձեր գնած վարդենին. դուք կարող էք նրան այժմ տանել, ուր կամենաք, վարդենին չի թառամիլ. միայն պահպանեցէք ցրաից. — ասաց Անտօնիօն մի օրիորդի, որի երեսը, հագուստը և խօսակցութիւնը ցոյց էին տալիս, որ նա օտար երկրից է:

— Լաւ, պարոն, առէք ձեր փողը, — պատասխանեց օրիորդը, և մի թղթի կտոր տուեց մեր պարտիզանին:

Ես այն ժամանակ միայն հասկացայ, որ ինձ վաճառում են, և կարծես ցնցուեցի ու դարձայ պար-

ալիզանին, սկսեցի խնդրել, աղաչել որ ինձ չզրկէ մայրական հողից, վերջապէս լաց եղայ. բայց նա... նա ականջ չդրեց, նա նոյնպէս մնաց անխիղճ, անզութ, ինչպէս այն ժամանակ, երբ քաղեց իմ վարդմօրս և տուեց այն անծանօթ օրիորդին...

Ես կրկին մտաբերեցի, որ աշխարհաւմս, այս ունայն աշխարհումս յաւիաենականութիւնը լոկ խօսք է, որ մարդիկ անխիղճ են և անզութ:

Օրիորդը տեղաւորեց ինձ պատուհանի վրայ. իսկ միւս առաւօտ նա հաւաքեց իրեղէնները, առաւ և ինձ և ուղեղուեցաւ դէպի երկաթուղու կայարանը:

Շոգեկասոքի պատուհանից ես վերջին անգամ տեսայ իտալիայի պարզ ու կապուտակ երկինքը, վերջին անգամ նրա ջերմ արեգակի ճառագայթները տաքացրին իմ հալ ու մաշ, տխուը սիրալ. վերջին անգամ նրա թափանցիկ գեղիւուը շօշափեց, կարծես գըգուեց իմ թերթիկները և ես սկսեցի լալ...

Օրիորդը չհասկացաւ, չլսեց իմ հըաժարական դառն ողբը:

Գ.

Ինձ բերեցին դժնեայ հիւսիսի կոմերը և տեղաւորեցին մի լայնարձակ սենեակում: Ամեն ինչ այստեղ անծանօթ էր: Պատուհանների վրայ և սենեակի անկիւններում գարսած էին մի քանի ծաղիկներ և բոյսեր: Աստուած իմ, որքան գեղնած, մաշուած էին նրանք, կարծես նոր էին առողջանում, նոր էին կազդուրփում ծանր հիւսնդութիւնից յետոյ:

Սկզբից ես քաշվում էի այդ կիսամեռ բոյսերից, հեռանում էի, չէի կամենում խօսել նրանց հետ, բոյց

քանի օրերն անցնում էին, քանի ձմեռը վերջանում էր, ևս սկսում էի ընտելանալ, ծանօթանալ այդ ինձ նման խեղճ բանտարկեալներին:

Ձմեռային երկար երեկոներին նրանք պատմեցին ինձ իրանց տիսուր պատմութիւնը. ասացին, թէ իրանք այստեղացի չեն, որ իրանց հայրենիքը հեռու է, որ իրանք ծնուել են կովկասում, ամպամած լեռների ստորոտներում և այնտեղից արդէն ընկել են այս դժնեայ, անհիւրասէր հիւսիսը: Նրանք ոգեսրուած նկարագրում էին իրանց հայրենիքի արեւ, օդը, ջուրը, լեռներն ու ամբողջ հրաշալի հարաւային բնութիւնը և գանգատվում էին մարդկային անարդարութեան, անխղճութեան դէմ:

— Մարդը կարծում է, որ ինքն ամեն արարածների տէր և իշխանն է, նաև աշխատում է ամեն ինչ հպատակեցնել, սարկացնել իրան, բայց, ճշմարիան ասոծ, մարդն ամենափառ արարածն է. նա գութ չունի և չափազանց լինքնասէր է,—վերջացրեց իր խօսքը գեղնած մանիշակը:

— Այն... այն, բացականչեցին վճռողաբար միւս ծաղիկները և բոյսերը:

Այսպէս տիսուր, սաստիկ տիսուր անցնում էին օրերը անվերջ անբաւականութեան և գանգատների մէջ:

Մի օր ես նկատեցի, որ պատուհանի ապակիները տաքացել էին. բարձրացրի գլուխս և տեսայ, որ արեգակը սաստիկ այրում էր. փողոցում հալած ձիւնը կազմել էր մանր, կեղտոտ լճակներ. Բնութիւնը արթնանում էր իր խոր ձմեռային քնից... ես զգացի

որ մօտենում են գարնան օրերը, զգացի և սաստիկ, անչափ ուրախացայ: Վերջապէս մի գեղեցիկ, պայծառ օր զուշակութիւններս կատարուեցան. մեր տան լուսամուտները բացուեցան, սենեակների անտանելի օդը մաքրուեց և ես տեսայ, որ իրաւ ծառերը կանաչել, ծածկուել են տերևներով, որ վերջապէս միշտ մառախլապատ երկինքը պարզուել է և զով, անուշանոտ զեփիւը մեղմ տարածում է իմ և միւս ծաղիկների գլխիկները...

Անցաւ մի ամիս և մեզ բոլորիս հանեցին պարտէզ: Այստեղ մեր կեանքն աւելի տանելի է՝ քանթէ փակ սենեակներում: Մենք բոլորս կարծես կազզուրուեցինք, վերածնուեցանք, միայն խեղճ կովկասի գեղնած, մաշուած մանիշակը չկարողացաւ բարեել զարնանային արեգակին. նա մի քանի օրից յետոյ կուցաւ, թերեց իր գլխիկը կրծքին և փչեց իր անզօր շունչը...

Այստեղ, հիւսիսում բնութիւնն այնպէս շքեղ չէր, ինչպէս իմ հայրենիքումս. երկինքն այստեղ պարզ և կապոյտ չէր, ինչպէս այնտեղ՝ սիրուն իտալիայում՝ իմ քաղցր հայրենիքում, և գիշերներն այնպէս սքանչելի, այնպէս գեղեցիկ չէին. մինչև անգամ այստեղի լուսնեակն էլ կարծես արձակում էր մի ուրիշ, անսովոր աղօտ լոյս...

Բայց չնայելով գրան՝ մենք բախտաւոր էինք, գոնէ աշխատում էինք բախտաւոր լինել...

Մի գեղեցիկ, լուսնեակ, գիշեր, երբ երկնքում արդէն վառուել էին անհամար սատղիկներ և մի գիւթական փայլով ներկում էին մթնոլորտը և երկրիս բոլոր առարկաները, յանկարծ իմ ականջիս հասան անսովոր, բայց այնուամենայնիւ կարծես արդէն ծա-

նօթ ձայներ. Ես այդ ձայները լսած էի մանկութեանս երջանիկ ըոսէներում՝ այնտեղ, հեռու, իմ հայրենիքում։ Դա հարաւային սոխակի երգն էր. Ես մթափուեցայ և հիացած, լուռ սկսեցի լսել... Պահպուխտ սոխակն երգում էր իր սիրոյ սրտայոյզ մեղեղն. Նա պատմում էր իր հեռաւոր հայրենիքի, իր խաբուած, ոտնակոխ արած սիրոյ, իր փոքրիկ սրտի տանջանքների տխուր պատմութիւնը... ոչ... նա չէր պատմում... Նա չէր երգում... այլ նա լալիս էր, ողբում և այդ ողբը կտրատում էր իմ խոցուած, մաշուած սիրաբ։

Ես շարունակում էի լսել. վախենում էի շարժուել, շունչ քաշել: Վերջապէս սոխակի վերջին հառաջանքը կամաց-կամաց մեռաւ, անհետացաւ մթնոլորտում և ես ուշի եկայ: Երբ բարձրացը գլուխստեսայ, որ աստղերն արդէն անհետացել են երկնակամարից, լուսինը ծածկուել է ամպերով և մուժ երկինքը բոլորովին մթնել։

Ես ցնցուեցի, սարսուռ անցաւ անդամներովս և մի անհանգիստ, տենդային քուն եկաւ վրաս։

Բայց դեռ երկար չէի կարողանում մոռանալ սոխակի երգը, նրա հառաջանքը և արցունքները։

Դ.

Հետեւալ առաւօտ երբ ես կրկին զարթեցի՝ սոխակն արդէն նստած մերձակայ ծառին, սիրով նայում էր ինձ. Նրա փոքրիկ, վառվուն աչքերում ես նկատեցի կարեկցութեան նշոյլ։

— Երկի այս դժնեայ հիւսիսը չէ քո հայրենիքը, — դարձաւ նա ինձ։

— Ի՞նչից զիտես. հարցը ես, զարմացած նայելով նրա երեսին։

— Այնպէս... կարծում եմ... Բայց ես քեզ չեռ առաջ էի ճանաչում, երբ զու փոքր էիր և մանուկ. դու այն ժամանակ ապրում էիր քո մօր զոգումը։

— Ի՞նչպէս... ուրեմն, դու զիտես իմ անդարձ անցեալ երջանկութեան օրերս... բայց ի՞նչպէս...

— Ես ծնուած եմ այնտեղ, ուր և դու... այն աշխարհում, ուր արեգակն այնպէս ջերմ է, ուր օդն այնպէս պարզ, թափանցիկ և հոտաւէտ է, ուր բնութիւնը եղեմային դրախտի է նմանում, ուր...

— Ի՞չպէս... իտալիա... ճշմարիտ... բայց ի՞նչպէս դու գտնուեցար այստեղ, այս ցուրտ, անտանելի երկրում։

— Ես՝ ինչպէս և դու, կորցը իմ երջանկութիւնս և այժմ թափառում եմ երկրից երկիր... իտալիան յիշեցնում է ինձ իմ բախտաւորութեանս օրերը, իսկ այդ յիշողութիւնն անտանելի է ինձ համար։

— Ուրեմն, շարունակեցի ես սւելի և աւելի զարմացած, ուրեմն զու ճանաչում էիր և իմ խեղճ, անբախտ մօրս, որին այնպէս անզիթաբար սպանեց շարագործ Անտօնիօն... դու ճանաչում էիր մեր ծեռունի պարաիզպանին...

— Այն... ես միշտ երգում էի այն պարտիզում, ուր ծնուած են քո ծնողը և մենք մի ժամանակ ծանօթ էինք։

— Բայց չտեսան արդեօք դու իմ մօրս նրանից յետոյ, երբ նա զարդարեց իր անշունչ զիտելով այն անսիրտ օրիորդի կուրծքը։

— Տեսայ... միւս առաւօտ քո մօր դիմկը ձգած

Եր պարոիզի նստարանի մօտ... նա կիսամեռ, թառամած էր... ես բարձրացրի նրան և տարայ իմ բունը:

— Յետոյ:

— Նա կիսաշունչ էր... ես խսկոյն թռայ և բերեցի ցուրտ ջուր ու թրջեցի նրա երեսը... նա բարձրացրեց իր գլխիկը և տխուր, սաստիկ տխուր նայեց ինձ:

— Յետոյ... յետոյ... հարցնում էի ես մի տենդային յուզմունքի մէջ:

— Յետոյ նա հարցրեց քո մասին և ես պատմեցի, որ դու ողջ ես և խստացայ բերել նրան քեզ մօտ:

— Բայց ինչո՞ւ չբերիր, անզնվթ սոխակ, բացականչեցի ես:

— Սխալվում ես, վարդենիս, սխալվում. ես սպասում էի, մինչև որ մի քիչ կազզուրուեն քո մօր ոյժերը. այդ միջոցին ես բերեցի մի բուռն հող կտուցում և այնտեղ թաղեցի նրան. այդպէս անցաւ մի շաբաթ. երբ մենք մի առաւօտ եկանք քեզ այցելութեան, բայց... գու արդէն թողել էր քաղաքային պարտիզի մայրենի հողը և անհետացել...

Ես սկսեցի հեկեկալ: Առաւօտեան պարզ սառը ցօղը գլորուեց վրայիցս գետին:

— Քո մայրը, շարունակեց սոխակը, ուշաթափուեց... ես կամեցայ նրան ուշի բերել, բայց իզնւր, մահն արդէն սկսել էր իւր չար գործը. ես նստեցի մօրդ մօտ, երբ նա յանկարծ, կարծես հաւաքելով իր ունեցած վերջին ոյժերը, դարձաւ ինձ և հաղիւ լսելի ձայնով ասաց:

— Տեսնում ես, բարեկամ, ես մեռնում եմ... զաւակս, եթէ միայն նա կենդանի է, մնում է որք, միայնակ... խոստացիր ինձ, որ դու կաշխատես գտնել նրան և տալ նրան իմ վերջին մայրական ողջոյնը: Մի բոպէից յետոյ նրա թերթիկները փակուեցին և նա փշեց հողին:

Սոխակը վերջացրեց իր պատմութիւնը:

Ես լալիս էի:

Անցաւ մի քանի բոպէ. Աստուած իմ, որքան երկար էին այդ բոպէները:

— Բաւական է... բաւական, դարձաւ ինձ սոխակը, սրբիր արտասուքներդ... նրանք չեն կարող կենդանացնել քո անբախտ մօրը:

Ես չէի լսում նրան և շարունակում էի լալ: Երբ բարձրացրի գլխիկս՝ ոսխակն արդէն թռել, անհետացել էր. ես տեսայ, որ արդէն կէսօր էր: Տանտիկինս սափորը ձեռին մօտենում էր մեզ:

— Ի՞նչպէս թառամել է իմ վարդիկս... երեխ ջերմութիւնը վնասել է նրան, ասաց նա ինքն իրան և սկսեց առատօրէն ջրել իմ ցամաքած հողը: Խեղճը չէր հասկանում, որ այդ ջերմութիւնը, այդ կրակը իմ երակներումս էր, իմ սրտումս և որ այդ կրակը չէր վախենում ջրից... խեղճ տանտիկին... Երբ նա հեռացաւ վերջապէս մեզանից՝ կովկասի լեռների գեղնած շուշանը դարձաւ միւս բոյսերին ու ասաց.

— Բարի տանտիկին... եթէ նա էլ չլինէր՝ որքան որք, որքան միայնակ պիտի լինէինք մենք...

Ես հեգնօրէն ժպտացի. — խեղճ, նա չէր իմանում, որ ինքն իրաւ միայնակ է, բոլորովին միայնակ և աշխատում է համոզել, միսիթարել իրան... ցնորք...

Եւ ճշմարիտ, ես ինքս այնտեղ, հեռու սրտիս  
խորքում զգացի, թէ ինչպէս մի բան կարծես կը տ-  
րուեց սաստիկ, սաստիկ ցաւեց: Ես հասկացայ, որ  
ինձանում վերջին թելը, որ կապում էր ինձ կեանքի  
հետ, արդէն կտրուել է. ես զգացի, որ իմ կեանքը  
ոչ ոքին այսուհետև հարկաւոր չէ, որ նա անպէտք,  
անխորհուրդ է, ուրեմն և վնասակար... ես միայն  
արդեք, խափանարար կը լինիմ ուրիշներին. մտա-  
ծեցի և այդ միտքը սարսափեցրեց ինձ:

— Ի՞նչպէս... վնասակար է կեանքս... աշխա-  
տում էի լուծել ես այդ ահեղ հանելուկը և ներքին  
ձայնս անդադար, միակերպ մեքենայաբար կրկնում էր  
ինձ «այն, վնասակար է, վնասակար է»:

— Բայց ինչո՞ւ... ինչո՞ւ... աշխատեցի ես ըննու-  
թեան տակ ձգել ինձ անհանգստացնող միտքը:

— Ի՞նչո՞ւ... որովհետև դու խլում ես ուրիշ ծա-  
ղիկներից և բոյսերից արեգակի ջերմութիւնը, այն  
ջերմութիւնը, որ նրանց անհրաժեշտ է. դու խլում  
ես հողի կենսատու ոյժերը. դու այդ բոլորը խլում ես  
նրանցից, մինչդեռ նրանց կեանքը վնասակար չէ.  
նրանք գեռ նպատակ ունին ապրելու...

— Իսկ դժւ... և ներքին ձայնս յանկարծ լոեց:

— Իսկ ես, մեքենայաբար թուաւ բերնիցս:

— Իսկ դժւ... դու անպէտք ես... դու չունիս  
նպատակ... մեռիր, լաւ է մեռիր, կրկնում էր ներքին  
ձայնս:

— Մեռիր... հեշտ է առել... իսկ իրազործել...  
ոհ... ինչո՞ւ ծնուել նրա համար, ծնուել ոչնչից, որ  
մի օր կրկին ոչինչ դտունաս... բայց լսիր, ես ուզում  
եմ ապրել... ես նորից ուզում եմ տեսնել այն պարդ

երկինքը, այն արեգակի այրող ճառագայթները, այն  
փայփայող մեղմ զեփիւոը... և յանկարծ մեռնել...

— Այդ անկարելի է, անցեալը չէ դառնում:

Ուրեմն մեռիր... մեռիր... դու ոչ ոքին հար-  
կաւոր չես, այժմս անդադար կրկնում էր ներքին  
ձայնս:

— Ոչ ոքին..., որչափ անտանելի են այդ դառն  
խօսքերը... ոչ ոքին... այս լայնարձակ, այս ան-  
հուն աշխարհումս... դառն վիճակի... այն, իմ ներ-  
քին ձայնս չէ սխալվում, պէտք է մեռնել, անպատ-  
ճառ մեռնել:

Այդ ըսպէին ականջիս հասաւ սոխակի տխուր  
մեղեղին. նա դարձեալ լալիս, գանգատվում էր մարդ-  
կային անարդարութեան, աշխարհիս ունայնութեան  
դէմ: Նրա երգն այրում էր սիրտս: Եւ այդ իսկ ըս-  
պէին ես զգացի, թէ ինչպէս այնտեղ, հեռու, իս  
սրտի խորքում նորից կարծես մի բան կտրուեց. նո-  
րից զգացի ես մի անտանելի ցաւ. թերթիկներս  
սկսեցին օրըստօրէ թառամել. և այժմ ես զնում ես  
դէպի մահ, սպասում եմ անխուսափելի օրհասիս...

## ՅԻՄԱՐ ՈՉԽԱՐՆԵՐ

Շատ, շատ տարիներ սրանից առաջ լեռնաւանդ  
երկըներում ապրում էր մի խաչնարած և Սատուծոյ  
ողորմածութեամբ ապրում էր բաղդաւոր և երջանիկ:  
Միշտ առողջ, միշտ ուրախ և գոհ իւր ճակատագրից, նա  
սիրում էր իւր ոչխարները, իւր գառնուկները, փայ-  
փայում էր նորանց, պահպանում թշնամի-գայլերի՝ յար-  
ձակումներից և այդպէս ինսամելով իւր հօտը, նա օրէց  
օր տւելացնում էր նորու թիւր, աճեցնում էր նորան... և  
ոչխարները հասկանում էին այդ, տեսնում էին բարե-  
սիրու խաչնարածի իրենց վերայ ունեցած հոգսը և իրենց  
ոչխարային սրաների խորքերում տածում էին դէպի  
իրենց հովիւր սիրոյ և երախտագիտութեան ամենավառ  
զգացմունքները: Եւ ինչպէս կարող էին նոքա ապերախտ  
մնալ դէպի իրենց միակ պաշտպանը... ճշմարիտ է, որ  
այն հին, անցած-գնացած ժամանակներում ևս, ինչպէս  
և մեր օրերում, ոչխարները չունէին բաղդաւորութիւն  
պատկանել մարդկային սեռին և ուրեմն նոցա երախտա-  
գիտութեան զգացմունքը այնքան նուրբ և զգայուն չէր,  
ինչպէս մերը, բայց այնուամենայնիւ նոքա լաւ էին  
տեսնում և հասկանում, որ իրենց խաղաղ և անդորր

կեանքի, իրենց երջանիկ և ուրախ օրերի միակ պատճառը—խաշնաբածի քաջութիւնը, խելքը և բարի սիրան էր, և մանաւանդ, որ այդ բաղդաւոր ոչխարները ամեն բոպէ կարող էին համոզուել երկոյթի ճշմարտութեան մէջ... հարկաւոր էր միայն մի փոքր դիտողութիւն, լինի դա անգամ ոչխարային, դիտողութիւն հարկանցօրէն համեմատելու իրենց անձնական կեանքը ուրիշ, օտար ոչխարների կեանքի հետ, ոչխարների, որոնք իրենց խաշնաբածի անհոգութեան և նրա այլկայլ բարոյական պակասութիւնների պատճառով համարեա ամեն մի բոպէ դողում էին իրենց ոչխարային հոգիների ապահովութեան մասին և շատ անգամ, երբ նոքա վհատած, ուժից ընկած, անզօր պաշտպանվում էին իրենց ոփերիմ թշնամիներից, նոցա բորբուած ուղեղում ծագում էր մի սուր, անաջող միտք:

— Իրաւ... ունի՞նք արդեօք իրաւունք ապրելու...թէ... թէ... և այդ իսկ միջոցին խեղճ ոչխարը սարսափելով վերջացնել իւր խօսքերը, փակում էր իւր յուսահատ, լայնացած, շաշ աչքերը և սարսուալով անձնասուը էր լինում գայլի արիւնահետ ճանկերին.... գտնում էր նա այստեղ իրեն մաշող հարցի լուծումը,— չգիտենք...

Ահա այդ «ունի՞նք արդեօք իրաւունք ապրելու... թէ...» երբէք չէր անցում մեր երջանիկ ոչխարների մտքով, երբէք: Նոքա ծնվում էին, ապրում էին, մեծանում էին, ծերանում էին և սատակում էին, ճշտապէս կատարելով հինաւուրց Աստուածային «աճեցէք և բաղմացարուք» ի օրէնքները և պահանջները առանց որ և է հարցերի, մտատանջութիւնների և տարակուսանքների, առանց երկբայելու նոքա առնում էին կեանքից միայն այն, ինչ որ նա տալիս էր իրենց և աւելի քաջ, քանթէ XIX դարում, երբ ոչ թէ քիչ-շատ պատուական ոչխարը,

այլ մինչև անգամ յետին տղրուկը և ճանճը ունին իրենց անխախտ համոզմունքները, ասում ենք, աւելի քաջ մեր հերոսները համոզուած էին, որ այդ այդպէս էլ պիտի լինի, որ երջանկութիւնը այս աշխարհումս մշտնջենական է և իրենց, ոչխարների, ճակատագիրն է, որ այդ ամենը շատ բնական է և, իբրև նոյն իսկ բնութեան օրէնք, կարող չէ լինել այլապէս:

Եթէ մինչև անգամ մէկը աշխատէր ձգելնոցա ոչխարային սրտերում տանջող երկբայսութեան սերմը, մենք հաւատացած ենք, որ նորա, այդ մէկի ջանքերը կը մնային ապարդիւն և մեր բաղդաւոր, երջանիկ ոչխարները պինդ ծիծաղելով հարցնողի երեսին, անպատճառ կասէին:

— Արդեօք առնդջ էք, պարմն...

Եւ այդ «արդեօք առնդջ էք, պարմն»ը այնպէս կը ծու, այնպէս հեգնօրէն արտասանում էին համոզմունքի տէր և բաղդաւոր համարուող ոչխարները, որ հարցնողը սկսում էր տեղնուտեղը կարմրել և ամաչելով խոստում էր անտեղութեան սեղանի են, և վանում էր, որ իրաւ, այդ ջանքերը և անտեղի են, և յիմար...

Եւ այսպէս ուրեմն երկբայող պարոնը հիւանդ է և մեր ոչխարները բոլորովին, բոլորովին բաղդաւոր...

Բայց «ամեն սկիզբ ունի իւր վախճանը»— ասուած է գեռ հին ժամանակներում և այդ փիլիսոփայութեան ճշմարտութիւնը զգացին տարաբաղդաբար և մեր ոչխարները:

Անցան բաղդաւորութեան, ապահով երջանկութեան, օրերը և անդարձ տարին իրենց հետ ժամանակով խելօք, արերը և անդարձ տարին իրենց հետ ժամանակով խելօք, բարեսիրտ խաշնաբածի և խելքը, և քաջութիւնը, և բարեսրտութիւնը, ծերացաւ, պառաւեց խեղճը, ընկաւ ուժից, կամայ-ակամայ թողեց իւր պաշտօնը, իւր խնամա-

տար հովանաւորութիւնը և քաշուեցաւ մի կողմ, հլու համբերութեամբ սպասելով ահաւոր մահուան անխիղճ մանգաղին...

Եւ մի գեղեցիկ օր մեր ոչխարները մնացին բոլորովին որբ.

Խաշնարածը մեռաւ:

Երեսի վերայթողուած հօսում սկսուեցան արտունջ, անհամաձայնութիւններ, երկպառակութիւններ...

— Ի՞նչ կլինի մեր վիճակը, ախ, ի՞նչ կլինի մեր վիճակը, տրտնջում էին դեռ փոքրիկ, անզարգացած գառնուկները և յուսահատ նայում էին մեծերի երեսին, մեծերը արձակում էին մի ինչ որ է անորոշ, խուլ հնչիւն, որ կարելի էր թարգմանել և «այս» և «ոչ»-ի և մի անբնական, կեղծ, շինծու սառնասրտութեամբ դիտում էին փոքրիկ, շուրջած գառների անհանդատութիւնը: Բայց այդ սառնասրտութեան, այդ կարծես անվրդով հանգստութեան տակից յայտնի երեսում էր և նոցա, այդ մեծ ոչխարների, անսովոր յուզմունքը. և նոքա նոյնպէս տանջվում էին այդ «ախ, ի՞նչ կլինի մեր վիճակը»—սարսափելի, անորոշ հարցով և նոքա ևս մեքենայաբար դարձնելով իրենց յուսահատ աչքերը մեծ և մեծ այծերի վերայ, վզերը ճկած նայում էին նոցա երեսին, կարծես այստեղ որոնում լինէին իրենց մաշող հարցի լուծումը. և երկի, ժամանակով բաղդաւոր ոչխարները գանում էին այստեղ, այծերի մօտ, իրենց փրկութիւնը, գանում էին, որովհետեւ, ճշմարիտ, այծերը այնպէս անվրդով և հանգիստ պահում էին իրենց, այնպիսի մի հպարտ արժանաւորութեամբ շարժում էին իրենց երկար մօրուքը այդ համաշխարհյին տագնապի միջոցին, որ մի բոպէ անդամ կարելի չէր կասկածել նոցա մեծութեան և անվեհերութեան մասին, մանաւանդ որ այդ «անվեհերու-

թիւնը և մեծութիւնը» խոշոր տառերով արձանագրուած էր նոցա լուրջ, խելօք, այծային ճակատների վերայ և միայն այդ փոքրիկ անհեռատես գառներն էին, որ չէին տեսնում այդ և իզուր ընկնում էին յուսահատութեան և անվերջ տարակուսանքի մէջ:

— Է՞՞... չէք տեսնում... ի՞նչ է... մենք ենք ձեր միակ յոյսը և ապաւէնը... մենք ենք... միայն մենք... կարծես առում էին այծերը մի այնպիսի վճռողական եղանակով, որ չէր պահանջում ոչ բացասական պատասխան և ոչ զանազան անտեղի «բայց»-եր, «ի հարկէ»-ներ, «սակայն»-ներ և այլն...

— Ի հարկէ դուք էք... միաբերան պատասխանում էին արդէն ծերացած, փորձառու ոչխարները և յանդիմանօրէն նայում էին փոքրիկ, անխելք, շաշուած լակոտների վերայ:

— Դուք էք... միայն դուք...

Եւ սակաւ առ սակաւ վախը, յուսահատութիւնը և մաշող, տանջող երկբայութիւնը հեռանում էր, անհետանում էր նոցա սրտերից և այստեղ՝ կրկին տիրում էր ձիշտ ոչխարային անվրդով, երջանիկ, խաղաղ անդորրութիւնը: Իսկ այծերը ինքնահաւան բաւականութեամբ շարժում չէին իրենց երկար, սրածայր, սպիտակ մօրուքները:

— Ա՛խ, ի՞նչ կլինի մեր վիճակը, ախ, յանկարծ լըս-վում էր լուսութեան մէջ անփորձ, վախկոտ գառնուկների բոլորովին անտեղի տրտունջը...

— Այծերն են մեր փրկիչները... այծերը, շնչասպառ գոռում էին ոչխարներից աւելի հեռատեսները և ցոյց էին տալիս այծերի վերայ:

— Ա՛խ, ի՞նչ կը լինի մեր...

— Այծերը, այծերը, այծերը, անընդհատ լսվում էր

ամեն կողմից:

— Բայց ախրը, մենք...

Այծերը և մենք ձեռք ձեռքի տուած, եղբայրական սերտ կապերով կապուած... սկսում էին ոզնորուած, մի ինչ որ ինքնամոռացութեան զանցառութեան մէջ ոչ լսարները և ծածկում էին իրենց աղաղակներով գտնուակների թոյլ, անզօր ձայները և հեծկլտանքը...

Եւ կըկին այծերը անվրդով, ինքնահաւան շարժում էին իրենց երկար, սրածայր մօրուքը...

Սնցան օրեր, ամիսներ և գառնուկները առաջին անգամը չէր, որ տիսուր, յուսաբեկ, ճմլուած սրտով յիշում էին իրենց մեռած խաշնարածին: Ինքնավար այծերը, որոնց հեռատես և փորձառու ոչխարները ընարել էին իրենց տէր և պաշտպան, ի թերեւ հանեցին հօսի յոյսերը, ապագայի բաղձանքները և ցանկութիւնները: Օր ըստ օրէ աւելի և աւելի յաճախ կըկնը վում էին թշնամի գայլերի անակրնկալ այցելութիւնները: Օր ըստ օրէ սաստկանում էր նոցա անգուստ, յանդուզն վարմունքը խեղճ, բայց ժամանակով բաղդառը, ոչխարների հետ: Օր ըստ օրէ բաղմապատկում էր նոցա չարաչար բռնաբարութիւնների և անմեղ զոհերի թիւը:

Դաշտում, ձորերում, անտառում մութ, ամպած զիշերները լսվում էր գառների և ոչխառների օրհասական, սիրտ պատառող բառանչումը գայլերի արիւնաթաթախ ճանկերում, լսվում էր և խառնուելով մի ուրիշ անբաղդի վերջին, մահուան խոմփոցի հետ կըկնվում էր մի հեռու, խուլ անորոշ արձագանքով...  
— Իսկ այծերը...

Օ՛օ... այծերը, և ով կարող էր սպասել, հանդիսացան իբրև ամենաճարապիկ, բաղաքակիրթ այծեր: Նոքա մտերմացան թշնամի գայլերի հետ, գրաւեցին նոցա սէրը, համակըռութիւնը և անընդհատ, պարբերական զիջումների «պօլիտիկայ»-ի շնորհիւ կարողացան պահպանել իրենց կաշին, կեանքը, հոգին, բարքն ու վարքը և մինչև անգամ իրենց այծային ժողովրդական լեզուն և աւանդութիւնները:

Նոքա հրապարակաւ խոստովանում էին, որ իրենց ընտրած ինքնավարութեան և միջազգային յարաբերութիւնների եղանակը հիմնուած է ժամանակիս քաղաքակրթութեան ամենաանհրաժեշտ պայմանների վերայ և կարող չէ լինել այլապէս:

— Իրերի այժմեան դրութիւնը, նկատում էին նոքա լրջօրէն, և բնութեան անխախտ օրէնքները ցոյց են տալիս մեզ, որ կեանքը մի անվերջ, սաստիկ պատերազմ է, ուր յաղթողը ուժեղն է, իսկ յաղթուողը — անզօրը... օրինակ ձեզ և Եւրոպան և Ասիան... ուրեմն եթէ ժամանակ առ ժամանակ մեր հօտերից պակասում են ոչխարներ, որոնք զոհ են գնում յարգոյ գայլերի անմեղ ցանկութիւններին...

Բայց այդ իսկ բոլէին ձորում կրկին լովում էր բառանչող ոչխարի վերջին օրհասական, խոպոտիչը և այծերը երեխ աւելորդ էին համարում շարունակել իրենց պարզաբանութիւնները.....

Եւ պակասում էր օրէց օր երբեմն ոչխարաշատ հօտը, անհետանում էին, վշանում էին ցեղային առանձնայատկութիւնները և դեռ, Աստուած զիտէ ինչ հրաշքով, կենդանի մնացած, թշուառ, միշտ գողացող, միշտ շաշ ոչխարների և գառնուկների հիւանդ լարուած, բորբոքուած ուղեղով շուտ

անցնում էր միշտ սահնջող, միշտ մաշող, բայց երկի  
միշտ և անպատճիսան հարցը.

Ունինք արդեօք իրաւունք ապրելու...թէ... թէ...

## ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇՈՒՆ

Ամառ է. արևելեան կիսօրեայ կիզող ճառագայթ-  
ները անողորմ այրում են չորացած, տեղ-տեղ  
ճեղքըսուած գեանի հողը. անտանելի շոգը փոսւել  
է անշարժ, թրմրած, տաքացած օդում և կարծես  
արձանացած, քարացած ծառերի ճիւղերը անդօր  
կոացըել են գեանին իրենց փոշիոտ, մութ-կանաչ  
թերթիկները: Ամեն կեանք, ամեն շարժողութիւն  
կարծես անշունչ, անողայ թմրել է բնութեան, այդ  
հրաշալի արևելեան բնութեան կրակոտ համբոյըների և  
օրօրող, թովչարար գրկախառնութեան մէջ... Միայն  
շատրուանն է, որ պսպղեցնում է իւր ծիածանագոյն  
կաթիւները և անվերջ մեղեղիական խոխոջիւնով շիռ-  
թում է արևելքի միջնօրեայ անդորրութիւնը: Փաշայի  
պալատի լայն, քարած բակում ոչ ոք չէ երկում.  
միայն հեռու, մութ անկիւնում, պատի ստուերի տակ  
պառկած է մի շուն. նրա ցից ցից կանգնած մազերը  
Աստուած գիտէ երբ թաթախուել են ցեխի մէջ և  
ժամանակից չորանալով այնպէս էլ մնացել են և կախ-  
ուել են երկար կեղտոտ կտորտանքներով: Մեծ եր-  
կաթեայ օղակներից հիւսած շղթան՝ անցնելով շան  
վզովը, պինդ ամբացրած էր քարաշէն պատից:  
Շունը արթուն է. նրա կրակոտ աչքերը անդա-  
դար վազվզում են բակի մի կողմից միւսը և միայն  
երեմն կանդ են առնում կամարակապ արաբական  
ճաշակով շինուած և զարգարած գրան վերայ. շունը

հսկում է. նրա կիսաբաց բերանից կախ է ընկել երկար, կարմիր լեզուն. նա ստէպ ստէպ խորը շունչ է քաշում. նա կամենում է գովացնել իրեն տանջող ծարաւը. բայց ի զնուր, նրա շուրջը չկայ ոչ մի կաթիլ զնուր. ամանը, որ դրած է նրա մօտ, դեռ երեկուանից բոլորովին դատարկ է. նա կրկին սկսում է շրջել իւր փայլող, սուր աչքերը և նրա հայեացքը ընկնում է շատրուանի վերայ. պարզ, սառը ջուրը բարձրանալով այնտեղ դէպի վեր, ընկնում է ցած փշրուելով հազար ու մէկ ցոլացող, գունաւոր կաթիւների. շան աչքերը ագահութեամբ նայում են դէպի շատրուանը. նրանք աշխատում են համնել, մօտենալ այդ կարծես կախարդական գովարար շրջանակին, ուր այնպէս հով է և ուր ջուրը այնպէս պարզ... Շունը անհաստատ բարձրանում է տեղից, շաշ մթնած աչքերով նայում է ջրի պսպղուն ելմէջներին և ամբողջ մարմնով մղվում է առաջ և առաջ... բայց մի քայլ և ահա սկսում է շակշակալ երկաթեայ շղթան և պինդ սեղմել նրա վիզը. շունը կանգ է առնում, անմիտ նայում է դէս ու դէն և գլուխը կոր, ծարաւի բորբքը սրտում դառնում է իւր տեղը...

Իսկ շատրուանը կրկին և կրկին թաւալում է իւր «կարկաչահոս մարդարիսները»...

Շունը պառկեց և նրա ցամաքած, այրուող ուղեղում ծագեց մի միտք:

— Է՞հ, իրաւ որ կեանքս շան կեանք է, մտածում էր նա, ոչ զիշերը հանգստութիւն, ոչ ցերեկը, դեռ տանջումը էլ, կարծես մաշուածս քիչ է. և ի՞նչ արժէր գընապան Ալիին լցնել ամանս ջրով և յետոյ երթալ Բօսֆօրի ափը... չէ... արի տես որ անպատճառ հարկաւոր է տանջել ի՞նձ, չարչարել, ծարաւ-

պահել և ի՞նչ է, որ շուն եմ... էհ, մարդիկ, մարդիկ... և նա հեղնօրէն ծոմուց իւր շնային երեսը:

— Եւ ինչնվ եմ վատ, ասէք խնդրեմ, այն փոքրիկ միշտ սանրած, միշտ լուացած լակուաներից, որոնց վաշայիս հարեմիսանայի խանումները այնքան սիրում են, փայփայում են և միշտ անուշեղէններով են կերակրում:

Հա, ճշմարիտ է. ես գեղեցիկ չեմ, ես սպիտակ մորթ չունիմ, բայց այնուամենայնիւ ես անգործ էլ չեմ, ես պահպանում եմ տունը և բակը գողերից, ես ամբողջ զիշերներով, երբ ամեն ի՞նչ, կենդանի վայելում է անոյշ քուն, հաչում եմ, անդադար հաչում եմ մինչև որ շխոպոտի ձայնս և այդպիսով հեռացնում եմ տանից վտանգը և դժբաղութիւնը. ես վերջապէս ամեն ըռպէ զոհում եմ, այն զոհում եմ կեանքս զանազան չարագործների ի՞նձ դէմ լարած դաւադրութիւնների, թունաւորած հացիկների և ուրիշ խարդախութիւնների շնորհիւ և այդ ամենը իմ պայծառափայլ վաշայիս բարեկեցութեան համար... և ի՞նչ փոխարէնը... մի բուռն յարդ, չորացած հացի կտորներ և ջուր... Ոչ, ջուրը խնայում են, դառնութեամբ նկատեց շունը և շարժեց գլուխը:

Մի քանի ըռպէներ անցան լիակատար լուսթեան մէջ:

— Զէ, չ'ասէս այդպէս, Հայշուն, (այդպէս էր մեր հերոսի անունը) չէ, ինչու անարդար ես դատում. անունը այն լակուաները, որոնք թաթախուած են այժմս ախը այն լակուաները, որոնք թաթախուած են այժմս ախը այն լակուաներն և պերճութեան մէջ, քեզանից, այ բաւականութեան և պերճութեան մէջ, քեզանից, խեղճ, անհամեմատ բարձր են իրենց կրթութիւնով, խեղճ, ուսումով, ճարպիկութիւնով, էլ որը ասեմ... խեղճով, ուսումով, ճարպիկութիւնով, չէ ժամանակով չնչին, շրջմուիկ փողոցի ախը նրանք էլ ժամանակով չնչին, շրջմուիկ փողոցի

շներ էին և մահմեղական արևելքում միայն իրենց անձնական յատկութիւնների շնորհիւ հասան այս երջանիկ օրերին. տես, նըանք պարել էլ զիտեն, համարել էլ, թոչկոտել էլ, ամեն բան զիտեն, որն ասեմ. իսկ դու, դու ողորմելի Հայշուն, ի՞նչ զիտես. — ոչինչ:

Եւ ջրի նման մի բան փայլեց խեղճ Հայշունի աչքերին. արտասմբք էր դա: Լալիս են արդեօք շները, — չզիտենք. ասում են միայն, որ այդ պատահում է...

## ՆԱ ՍՊԱՍՈՒՄ Է ԴԵՌ

(Պատկեր):

Ամրան վերջն է...

Խան..սարա հայ զիւղը ամբողջապէս թաղուել է մուգ կանաչում: Հարաւային արևի կիզիչ ճառագայթները՝ թափանցելով եթերային պարզ կապուտակը, առատօքէն լուսաւորում են շրջակայ լեռների ապառժու, մերկ գագաթները և կիսամութ, շարժուն սառերներով խաղում են նոցա բարձրաւանդ սառըների միշտ մոայլ, միշտ խոնաւ փեշերըում. այդ ճառագայթներից մի քանիսը ուրախուրախ արտափայլում են Ալա.. զան գետակի հանգիստ, խաղաղ ջրերում և միանգամից լցուելով մօտակայ անտառի ներսը լուսափայլ, պապղուն ցոլքերով սկսում են շողշողալ գարեւոր ծառերի թերթիկների ու ժամանակից արգէն կանաչած, բորբոսնած թփերի վերայով...

Շքեղ հարաւային բնութիւնը, կարծես, թմբել, քնել է արևի հառագայթների այդ կիսօրեայ, փայփայող ջերմութեան տակ. երբեմն երբեմն միայն լեռների ստորոտներից փչող քամին մեղմ, ալիքաւոր տառամումներով օրօրում է ցորենի ոսկեայ հասկերը ու, վրդովելով մի բոսէ հացահատիկների խաղաղ

ծովը, կրկին կորչում է լեռների հեռաւոր խորքեցում...

Գիւղի մօտակայ բարձրաւանդ բլրից օձաձհ պտոյաներով իջնում է ցած ճոխ այգեստանը և իւր փեշերքով անհետանում է կանաչաղարդ հովտի անհուն տարածութեան մէջ:

Օգոստոսն է:

Խաղողը սկսում է հասնել. նորա լիք-լիք հատիկ-ները անզօր, ծանրացած կուցել են գետնին և, կարծես, ամաչած ծածկուել են սրածայր եռանկիւնի թերթիկներով և տեղ-տեղ միայն զոհարի նման ցույնում են արեգակի փայլուն ճառագայթների տակ:

Թաց, պարարտ հողը սրտի խորքերից լոյս աշխարհ է հանել իւր առաս բերքերը և կանչում է իւր մշակ-գիւղացուն, և այդ գիւղացին, այդ հողի որդին լսել է իւր մօր ձայնը ու ահա դուրս է եկել դաշտը. նորա մանգաղը, գութանը, խոփը, գերանդին արագարագ բանում են այդ հողի փերայ և նորա աղի քրտինքը կաթ կաթ ոռոգում է գետինը:

Բայց գիւղացին ուրախ է, սրտանց ուրախ: Նա անհոգ, զուարթ երգում է իւր պապերի աւանդած երգը և նորա «հարալօ»-ի բարձրածայն ելեէջները խուլ արձագանքներով կրկնվում են հովտի հեռաւոր անկիւններում...

Այս, ուրախ է հայ գիւղացին, ուրախ է ամբողջ Խան... սարան: Միայն մի մարդ չէ մասնակցում այդ ընդհանուր հրճուանքին. դա—գեղջլունի Սաթինիկն է, Հասօյի կինը. նա չգիտէ այլ ես ուրախանալ. նորա ուրախ օրերը անցել-գնացել են. նա մոռացել է ան-

գամ' այդ օրերը... նա գուլս չէ եկել դաշտը. նա համարեա մենակ է մնացել գիւղում. այնտեղ, դաշտում Սաթինիկը գործ էլ չունի, ոչ ցորեան, ոչ այգի, ոչինչ չունի նա.. այն, կար ժամանակ, երբ նա էլ Հասօյի հետ գնում էր դաշտը, ուրախ, զուարթ աշխատում մինչեւ արևամուտը, ցորեան էր հաւաքում, խուրձեր կապում, կալսում, խաղողը կտրում, օղի քաշում, այն, նա անում էր այդ ամենը, բայց շատ և շատ առաջ, երբ գեռ Հասօն Խան...սարայումն էր և Սաթինիկի որդին, Գրիգորը, փոքրիկ էր, շատ փոքրիկ... Այժմս Հասօն չկայ. ահա հինգ տարի է համարեա, ինչ նա հեռացել է, մեկնել է Խան...սարայից օտարութիւն՝ մշակութիւն անելու համար:

Ի հարկէ, Հասօն երբէք չէր թողնիլ իւր հայրենի Խան...սարան, կինը, իւր խարխուլ տնակը, եթէ միայն գիւղական պարսիկ բէզը չնեղէր, չհարկադրէր նորան: Հասօն փող էր առել բէզից: Երաշտութիւնը խանձել չորացրել էր մի տարի նորա ցանքը. Հասօյի ընտանիքը մնացել էր առանց հացի. նա կարող էր սովամահ լինել: Հասօն ճարահատեալ դիմել էր բէզին և ահազին տոկոսներով փող էր վերցրել նորանից. եկաւ ժամանակի վճարելու. Հասօն չունէր փող. բէզը սկսեց սպանալ, նեղել, ճնշել: Անվճար տոկոսների փոխարէն Հասօն ամեն տարի, գարնանը, ձրի աշխատում էր բէզի գաշտերում, պարտէզներում և կրկին չէր կարողանում ազատուել պարագից. այդ կարծես անվերջ պարագի գլուխը մնում էր ու մնում:

Շուտով Հասօյի եղները, ոչխարները նոյնպէս անցան բէզի ձեռը: Մերկ մնաց խեղճ Հասօն, ձղեց արօրը, խոփը, իւր քրտինքով պարարտած հողը, խաչակնքեց երեսը և վճռեց գնալ ու պանդխտութեան

մէջ զտնել իւր բաղդը: Նա լսել էր, որ Բագուի նաւթագործարաններում միշտ կարելի է գործ զտնել և լաւ փող ձեռք բերել. հաւատաց Հասօն և զնաց... զնաց ու մինչև այժմս չէր վերադարձել: Սաթինիկը լաւ մտարերում էր այդ օրը: Հասօն և մի քանի նոյնպէս նորա մշակ ընկերները դուրս եկան գիւղական փոքրիկ մատուից, մատաղ արին և տալով իրենց վերջին հրաժարականը աղդականներին, գիւղացիներին, ամբողջ Խան... սարային ելան մեծ ճանապարհը. նոքա գնում էին ոտով. երբ հասան գիւղի ծայրը, Հասօն դարձաւ Սաթինիկին, առաւ նորա գրկից փոքրիկ Գրիգորին և համբուրելով երեխային ասաց.

— Լաւ նայիր նըան... ես շուտով կը գամ...

Եւ արտասուրի նման մի բան ցոլաց Հասօյի արևառ, կոշտացած երեսի վերայ:

— Լաւ նայիր գրան...

Այդ Հասօյի վերջին խօսքերն էին. զրանից յետոյ Սաթինիկը չտեսաւ իւր Հասօյին: Նորա հետ զնացած ընկերները վեղուց վերադարձել էին Խան... սարա. նոքա ասում էին, որ Հասօն անցել է Ռուսաստան. ուր է այժմս նա—նոքա չգիտեն. մի բանիները աւելացնում էին, որ Հասօն հիւանդացել էր այնտեղ, ամիսներով չէր վեր կացել աեղից և այլն:

Սաթինիկը անհամովիստ էր. անյայտութիւնը տանչում էր նորան: Նորա՝ ժամանակով գեղեցիկ, առողջ դէքը թալկացել, մաշուել էր. Նորա սև, վառվառն աչքերը խորը ներս էին ընկել կոպերի մէջ. նորա անգոյն շրթունքներից վաղուց արգէն թռել էր անհոգ ժպիտը. փոքր կնճիռները ծածկել էին նորա երեսի մորթը. մաշոցքը դրել էր իւր անխղելի կնիքը Սա-

թինիկի խորշոմած ճակատին. պասաւել էր օր առաջ խեղճը, ուժից ընկել...

— Ո՞ւր էր Հասօն.. ողջ էր արդեօք... ի՞նչ պատահ նորան— Աստուած գիտէ:

Եւ այդ միաքը անդադար մաշում էր Սաթինիկին:

— «Լաւ նայիր դրան... ես շուտով կը գամ», միշտ զարթնում էր խեղճի ուղեղում:

— «Ես կը գամ... կը գամ», լսվում էր նորա ականջներին:

Եւ Սաթինիկը սպասում էր:

Շարունակ իրար ետեից անցնում էին օրեր, ամիսներ, տարիներ. իսկ Հասօն չկար ու չկար...

Գրիգորը մէծացել էր:

Նա արգէն 8 տարեկան էր. զրկանքը և աղքատութիւնը, որ նոյն խակ օրօրոցից ծանօթ էին Գրիգորին, սովորեցրին նորան աշխատել. երեխան օգնում էր մօրը, փայտ էր բերում անտառից, թոնիրը վառում, իրենց միակ կովը և մի քանի ոչսարները դաշտ քշում. Նա արգէն գիւղացի էր, նա արգէն բանով էր, մեծ էր, չնայելով որդեռ նոր էր բոլորել իւր եօթներորդ գարունը:

Գրիգորը բնութիւնից մի ծանրակշիռ միշտ մտածող, միշտ լուս տղայ էր. մանկական ուրախ, անհող խաղերը շատ քիչ էին զրադեցնում նորան. Նա երբեք չէր գնում հասակակիցների հետ անտառ, չէր բարձրանում նոցա պէս ծառերի վերայ և չէր քանդում թռչունների բուները, չէր գողանում նոցա անփետուր ձագիկները. Նա չէր սիրում մասնակցել այդ շրջմուկների կողոպուտ արշաւանքներին այդիների ու

պարտէզների վերայ: Գրիգորը քշում էր իւր ոչխարշները կանաչ զառիվայրի ստորոտը և այնտեղ, պառկած մէջքի վերայ, ամբողջ ժամերով, անընդհատ դիտում էր պարզ-կապուտակ, սիրաշունչ երկինքը. նորա հայեացքը ընկնում էր յանկարծ մի մոխրագոյն ամպի կտորի վերայ, որ բաժանուելով իւր երամից մենակ սահում էր եթերական բարձունքի մէջ, և Գրիգորը չէր հեռացնում իւր լայն բացած աչքերը այդ լողացող ամպից: Նա հետեւում էր նորա միշտ փոփոխուող ֆանտասիկական գծագրութիւններին, և երեխայի լարուած երևակայութիւնը սկսում էր տալ այդ ամպին զանազան նմանողութիւններ: Ահա նա կուտակուեց, հաւաքուեց մի տեղ. որքան նման է նա գիւղացի Սագօի հնացած «փափախին». ահա ամպը վըռուեց, լայնացաւ և հարնան թուրք ֆաթմայի «չափուայի» նման սկսեց մեզմ տատանուել, այդ ամենը արագ անցնում է Գրիգորի լարուած երևակայութեան մէջ և նա շարունակում է լուրջ դիմել այդ մոխրագոյն ամպի փոքրիկ, փափող կտորը: Մի քանի ժամանակից ամպը հեռանում է, կորչում է Գրիգորի աչքերից, բայց վերջինը դեռ երկար, երկար նայում է նորա ետեից...

Կէս օր է: Արեգակի այրող ճառագայթները շեշտակի ընկնում են վերեկց: Սաստիկ տաք է: Փոշիանման, հազիւ նկատելի ստուերներով տասանսվում է տաքացած, խոնաւութիւնից զուրկ օդը: Գրիգորը դանդաղ բարձրանում է արօաից, հաւաքում է իւր փոքրիկ հօտը և քշում է նորան մօտակայ աղբիւրը. մինչ ոչխարները բարձր, ուրախ մայելով մօտենում են ջրին, Գրիգորը կոանում է աղբիւրի ափին և ականջ է դնում նորա կարկաչանոս, խորհրդաւոր շվշոցին.

Նա ուշադրութեամբ լսում է աղբիւրի երգը. նորան ծանօթ է այդ մեղեգին, այդ աղբիւրը կարծես խօսում է Գրիգորի հետ...

Արեր սկսում է կամաց կամաց մայր մտնել. նորա վերջին, արիւնագոյն ճառագայթները հրեղէն բոցերով ներկում են շառագունած արևմուաքը: Գրիգորը թողնում է իւր սիրած զառիվայրը և զանդաղ քշում է իւր հօտը դէպի գիւղը:

Կախարդիչ հարաւային զիշերը երեան է զալիս իւր հրաշալի գեղեցկութեան ամենաղիւթական հրապոյրներով: Գրիգորակ լուսնեակը երեսում է մութ-կապոյտ երկնակամարում և իւր արծաթափայլ ճառագայթները շեշտակի ձգում է քնած բնութեան վերայ. անհամար, պապուն աստղերը սկսում են ուրախ ուրախ ցոլալ հօրիզոնի անհուն, լայնածաւալ բարձունքում. շրջակայ լեռների զադաթները քօղաւորվում են զիշերային նօսր, թափանցիկ մշուշով, ուր մեզմ արտափայլումներով շողշողում է լուսնի կաթնագոյն լոյսը...

Խան...սարան կամաց կամաց քնում է:

Գրիգորը արթուն է, նա բարձրանում է իրենց խըրճիթի տափարակ տանիքի վերայ և ժամերով մնում է այնտեղ. նա զիտում է հեռուի ամպամած սարերը, կիսալուսաւորուած հովիաները և ձորերը, մութ, սեփ տուող ժայռերը և հեռու, հեռու հօրիզոնում մի նեղ արծաթեայ ժապաւէնի նմանող խաղաղ, հանդարտ Ալա..զան գեալը: Մի խորին, անբացարելի զգացմունք տիրում է Գրիգորին. նորա մանկական, զգայուն սիրալ լցվում է անհուն, սուր հրճուանքով. նա զմայլում է հրաշալի բնութեան կախարդիչ գեղեցկութիւնով. նա իւր սրտի բոլոր ոյժերով միանում է այդ բնու-

թեան ցնծութեանը, նա ճանաշումէ, զիտէ այդ լիու-  
թիւնը, զիտէ համարեա օրօրոցից և սիրում է նորան,  
սիրում սասափկ...

կէս զիշերային լուսնեակը ծածկվում է ամսելու-  
ի մօտակայ պարտէցներից մէկում սոխակը սկսում է  
իւր բերկրացող, ցնծացող սիրոյ սիրա ճմլող երգը. նո-  
րա զմայլեցուցիչ, զիւթական գայլայլիները խորը  
որձագանք են գտնում Գրիգորի բերկրացող սրտում. նա  
լուռ, անշարժ լսում է սոխակի մեղեղին և արտասուրի  
շիթերը սկսում են փայլել նորա մեծ, սեորակ աչքերի  
թերթիներում...

Վաղուց լոել է սոխակը, ահա լսվում է կէս զիշե-  
րային խորհրդաւոր լութեան մէջ զիւղի աքաղաղների  
երկարաւե, ճաթան աղաղակը, բայց Գրիգորը դեռ  
լուռ, անշարժ, զմայլած կանգնած է տանիքի վերայ:

Եւ ջերմ, շուտ շուտ բարախում է նորա փոքրիկ,  
մանկական սիրաը...

Սաթինիկը սիրում է իւր «մինուճար» Գրիգորին.  
աւելի, նա պաշտում է նորան. Հասօյի անհետանալուց  
յետոյ իւր փոքրիկ որդու մէջ ամփոփեց անբաղդ  
մայրը իւր բոլոր սիրաը, սէրը և յոյսը. Գրիգորն էր,  
որ կապում էր խեղճ Սաթինիկին այս ունայն աշխար-  
հի հետ. Գրիգորից չոկ ոչինչ այս աշխարհում չէր  
հրապուրում, չէր քաշում դէպի իրեն չարչարուած,  
տանջուած Սաթինիկին:

— «Եաւ նայիր գրան... և շուտով կը գամ», ան-  
ցնում էր համարեա միշտ անբաղդ կնոջ մտքով:

— «Ես... շուտով... կը գամ». կը ինքը ի-  
րեն Սաթինիկը և արտասուրի երկու, այրող կաթիլ-  
ները թաց էին անումնորա օր առաջ հալումաշ եղած

երեսը:

Նա սպասում էր Հասօյին, սպասում էր ամի՞ն  
օր...

— Այ... նա կը գայ... կը տեսնէ իւր որդուն... ին-  
չպէս կուրախանայ երեխ խեղճը... կը ճանաչէ նա  
Գրիգորիս... ախը, երբ նա գնաց, Գրիգորը շատ փոքր  
էր... այս... նա կը գայ. և Տէր Աստուած ինչպէս լու  
կապրենք մենք.. բէզը կըկին հող կը տայ... կը ցա-  
նենք... այգեստանում կը բանենք... Գրիգորս կը մե-  
ծանայ... կը կարգենք... Տէր Աստուած... Տէր Աս-  
տուած... շնչում էր ինքն Սաթինիկը:

Բայց շարունակ անցնում էին օրեր, շաբաթներ,  
ամիսներ, իսկ Հասօն չկար ու չկար...

Սաթինիկը տխուր նստած սնկիւնում սկսում էր  
լալ, լալ անձայն. նա գաղտնի սրբում էր իւր ցնցոտի-  
ներով անվերջ, անզուսպ արտասուրիները:

Գրիգորն կատառմ էր այդ, նա մօտենում էր մօրը,  
փաթաթվում էր նորա վզին և ուղղակի նայելով նորա  
թաց աչքերին՝ հարցնում էր:

— «Ե՞րբ կը գայ հայրս... ևս ուզում եմ նորան  
տեսնել... դու ասացիր, որ շուտով... ինչու չկայ...  
Տ՞ը...» աւելացնում էր երեխան և չէր հեռացնում իւր  
քննողական հայեացըը մօր լացած աչքերից. իսկ այդ  
աչքերը սկսում էին աւելի և աւելի լցուել արտասու-  
րով. մի բան մօտենում էր խեղճ Սաթինիկի կոկոր-  
դին, սկսում էր ճմլել, խեղճել, և նա տխուր պատառ-  
խանում էր:

— Կը գայ, հոգիս, կը գայ, աչքիս լոյսը... համբե-  
րիր... կը գայ...

Եւ Գրիգորը համբերում էր, համբերում էր օրեր,  
ամիսներ, տարիներ. իսկ հայրը չկար ու չկար...

Գրիգորը արդէն 12 տարեկան է:

Դա մի առողջ կազմուածքով, կարմիր թշերով  
բարձրահասակ պատանի է. միայն նորա աչքերը սաս-  
տիկ անփայլ են. ոչինչ, ոչինչ չէ արտայայտում այդ,  
կարծես, ապակեայ աչքերի տխուր, անշարժ հայեացքը.  
այդ աչքերը երբէք չեն ծիծաղել, չեն ժպաել. իսոր  
մելամաղճոտութեան թափիծը միշտ երեսում էր այդ  
մեծ սերակ, բայց անկենդան աչքերում: Հարկան  
պառաւները, երբ նկատում էին Գրիգորի այդ անշարժ  
հայեացքը, տխուր շարժում էին դիմով և կամաց  
փափուում:

— Չէ... չէ... մնացական չէ... ապլոդերից չէ...

Եւ խորհուրդ էին տալիս Սաթինիկին «Բաշխել»  
Գրիգորին Սուրբ Տիրամօրը:

— Բաշխիր... բաշխիր... այ.. կը տեսնես.. վորձան-  
քից հեռու կը պահէ, Սաթինիկ ջան, տղուդ բաշխիր..

Սաթինիկը չէր լսում նորանց խրատներին:

Գրիգորը մեծանալով հասկացաւ իւր թշուառու-  
թինը, իւր որբութիւնը. այդ տանջում էր նորան: Նա  
տեսնում էր, որ ուրիշ երեխաները ունին հայր, մայր,  
ազգականնե, որ նոքա բաղգաւոր են, երջանիկ են.  
իսկ ինքը... ինքը որբ է, չունի հայր... այսինքն ունի,  
բայց երբէք տեսած չէ նորան... ուր է նու - Գրիգորը  
չգիտէ. մայրիկը ասում է, որ նա շուտով կը գայ. նա  
միշտ ասում է շուտով, բայց հայրիկը չէ գալիս. ինչնու-  
բարկացել է իրենց վերայ... թէ... թէ նա բոլորովին  
չկայ և Գրիգորը որբ է...

Այդ միաքը անդադար ծագում էր պատանու ու-  
ղեղում:

Նա աշխատում էր լուծել նորան, զալմմի որոշ  
եղբակացութեան. բայց չէր կարողանում:

Այդ անկարողութիւնը մաշում էր նորան և նա  
կրկին դիմում էր մօրը:

— Մայրիկ... ասա... ես հայր ունիմ... հը... ու-  
նիմ... ափը.. ինչնու. թողել է մեզ ու չէ գալիս... հը...

— Կը գայ, հոգիս, սպասիր... այ, ձմբանը կը գայ:

— Նա լսւ մարդ է... հա... շարունակում էր իւր  
հարց ու փորձը Գրիգորը:

— Նա... լսւ է... լսւ... հոգիս, պատասխանում էր  
Սաթինիկը և շապանվ դուրս էր գալիս գոմը:

Գրիգորը ընկում էր մատանջութեան մէջ:

— Նա լսւ մարդ է, անցնում էր նորա մաքով, լսւ...  
ոհ որչափ կամենում եմ տեսնել նորան, խօսել նորա  
հետ, համբուրել.. ես հօ երբէք տեսած չեմ նորան...  
այ, եթէ գայ հայրս, փողոցի երեխաները էլ չեն ծիծա-  
ղիլ վերաս... չեն հճուալ... չեն բարկացնիլ... անիծած  
եփրեմը սուս կկենայ այն ժամանակ.. ես էլ կունե-  
նամ իմ հայրը... մենք միասին կապրենք... ես կօգնեմ  
նորան... կաշխատենք... ինչ լսւ է... էլ խեղճ մայրս  
լաց չի լինիլ... նա ախր միշտ լալիս է... Բայց  
ինչնու.. ինչնու չէ գալիս... հայրս.. ոհ, որչափ կը սիրէի  
ես նորան... հայրիկ.. իկ.. իկ.. հայրիկ, մի ինչ որ զան-  
ցառութեան մէջ կրկնում էր դիմութեան Գրիգորը և  
վեր կենալով տաք բուրսու տակից լայն բացած, շաշ  
աչքերով նայում էր շուրջը:

Խրձիթում մութ էր:

Սաթինիկը անհանգիստ, անկանոն շնչում էր անկիւ-  
նում. նա կիսաքուն էր. նա լսում էր, որ Գրիգորը  
զարթել է:

— Ի՞նչ է, Գրիգոր, ինչնու ես վերկացել:

— Ոչինչ, մայրիկ, ջուր եմ ուզում..

— Խաչակնքիր երեսդ, երբ պառկես, ասում էր Սա-

թիհիկը և լուսմ: Գրիգորը մտնում էր գոմը, ջուր էր խմում և կրկին դալիս էր ու պառկում. բայց քունը գեռ երկար, երկար փախչում էր նորա աչքերից: Լուսաբացին նա արդէն քշում էր ոչխարները դաշտ:

Այսպէս անընդհատ սպասողութեան մէջ անցնում էին մօր և որդու օրերը. նորա յոյս ունէին կրկին տեսնել Հասօյին. միթէ նա չէր առել մեկնելուց առաջ—«Ես շուտով կը գամ»—և նա կը գայ, անպատճառ կը գայ, երեխ մի բան պատահել է, որ նա ուշացաւ. կարելի է փող ձեռք չէ բերել. ի՞նչ կայ, պարապ, առանց փողի գալու հօ չէ...

Այդպէս կարծում էր Սաթինիկը. նա համոզուած էր, որ Հասօն կը գայ և իրենց կեանքը կսկսի հոսել իւր առաջուայ խաղաղ, կանոնաւոր հոսանքով:

Նա ամեն օր իւր աղօթքի մէջ խնդրում էր Տիրոջից, որ շուտով վերադարձնէ իրեն իւր մարդուն, իւր Հասօյին:

—Սուրբ Աստուած, սուրբ Աստուած... Քեզ մտապ... քո անունիդ զուրբան. կրկնում էր նա չորացած, զունատ շրթունքներով... թող գայ Հասօն... թող գայ... ես էլ ոյժ չունեմ... սուրբ Տիրամայր... ողորմիր անմեղ զաւակիս «արե»-ուն... թող գայ խեղճ Հայրը... թող գայ...

Եւ խուլ հեկեկանքները կարում էին նորա ձայնը: Բայց կրկին անցնում էին օրեր, շաբաթներ. ամիսներ. իսկ Հասօն չկար ու չկար...

Հասաւ և ձմեռը:

Խան.. սարան թաղուեց ձեան ահազին տարափների տակ. դաշտը, մարգագետինները. այգեստանը, մըջակայ բլուրները և լեռները ծածկուեցան ձեան ցուրտ, սպիտակ քօղով:

մերկացել էին իրենց շքեղ կանաչից և տիտուր տարածել էին իրենց սե, թաց ճիւղերը մշուշոտ, խոնաւօդում:

Բնութիւնը ամայացել էր. ամեն ինչ նորանում, կարծես. քարացել, արձանացել էր. միայն ցուրտ քամին էր, որ ազատ սահելով դաշտային անհուն տարածութեան մէջ, անզագար բարձրացնում էր ձիւնոտ փոշին, խաղում էր նորա հետ, պտտեցնում էր նորան, կատաղի շուացնում էր և մի անգամից խփելով գետնին ցիր ու ցան էր անում նորան հազար ու մի փոքրիկ, պսպղուն, զմրուխտեայ փշրանքների...

Գրիգորը չէր մոռացել մօր խօսքերը. նա սպասում էր, որ ձմեռը գալու է հայրը:

—Նա... կը գայ... համ, հարցնում էր նա անդադար:

Սաթինիկը լուռ կուացնում էր իւր գլուխը:

Մի քանի բոպէից Գրիգորը կրկին դառնում էր մօրը:

—Ե՞րբ:

—Այս... շուտով, պատասխանում էր վերջինը և պինդ համբուրում էր Գրիգորի ճակատից:

Հասօյի երեսի վերայ ձգած ընտանիքը առհասարակ ապրում էր աղքատութեան մէջ, մանաւանդ ձմրանը սաստկանում էին աղքատութեան զրկանքները:

Հացը թանկանում էր, խոտը նոյնպէս. թոնրի համար հարկաւոր էր փայտ:

Գրիգորը գնում էր անտառ և մինչև մէջքը համարեա թաղուելով ձեան տարափների մէջ, բերում էր ծառի կտորանքները. նա աշխատում էր ուժից դուրս. նորա ցնցոտին, որ հազիւ ծածկում էր նորա մարմինը, չէր պատապարում նորան ցրաից: Անտառում նա միշտ մըրսում էր և դողում էր: Մի օր նա քրտնած, փայտի ահազին բեռը շալակին, տնքալով մտաւ իրենց

իրձիթը. նա կարմրել էր. տաք քրտինքը ծածկել էր նորա ճակատը, երեսը, մարմինը և որոր կաթիները ընկնում էին ցած. նա ծանր չնշում էր...

Գրիգորը այնուամենանիւ մրառմ էր. սարսուսանման դողը անցնում էր նորա անդամներով:

Նա ձգեց փայտերը թոնրի մօտ և մօտեցաւ քուրառն:

Նորա զլուխը ծանր էր և սաստիկ ցաւում էր. մի բան կարծես անդադար խփում լինէր նորա այրուող զլիխն: Նորա ականջներում անդադրում լսփում էր մի խուլ, անորոշ շվշվոց. նա զլիսով առաւ հնացած «եօրդանը» և պառկեց:

—Ի՞նչ է, Գրիգոր... ինչու ես պառկում, հարցը Եղ Սաթինիկը:

—Ոչինչ... հոգնեցայ... մի քիչ... պատասխանեց Գրիգորը և կողքի եկաւ:

Նորա աչքերը փակվում էին: Նա զգում էր, ինչպէս մի սուր բան ծակուում էր ներսը, կուրծքը. նա կարծում էր, որ այդ շուտով կանցնի: Նա աշխատեց քնել. թմրութիւնը պաշարեց նորան:

Հասաւ զիշերը: Գրիգորի տաքութիւնը սաստկացաւ նորա միշտ անփայլ խորը ներս ընկած աչքերը ցոլում էին մի անսովոր հիւանդու կրակով նորա անգոյն շրթունքները չորացել էին: Նա անդադար թաց էր անում այդ այրուող շրթունքները: Սաթինիկը յուսահատ նստած էր յատակի վերայ, քուրսու մօտ և անձայն աղօթում էր:

Հիւանդը մի ըսպէ բանում էր իւր ծանրացած կոռպերը, նայում էր շուրջը և կրկին փակում:

Ոչ մի ձայն, ոչ մի խօսք չէր հանում նա: Նա պիհնդ սեղմել էր իւր չորացած, անգոյն շրթունքները:

—Ի՞նչդ է ցաւում... զաւակս... հը... կմղքդ... ասա... քեզ մատաղ... հարցնում էր գողացող ձայնով Սաթինիկը:

Գրիգորը կարծես չէր լսում նորա հարցը:

Նա լսու էր: Խրձի խեղդող, ծանր լրութեան մէջ յայտնի լսվում էին հիւանդի շնչառութեան շուտ շուտ, անկանոն ելեջները: Ժամանակ առ ժամանակ միայն նորա կրծքից թռչում էին իսուլ, խոպոտ հեծկլստանքներ:

Սաթինիկը տոնում էր իւր ափերի մէջ հիւանդի ձեռքը և կամաց տրորում:

Այդ ձեռը այրվում էր:

Լուսաբացին հիւանդը մի քիչ խաղաղուեց. կիսարուն թմրութիւնը պաշարեց նորան:

Սաթինիկը վազեց եկեղեցի և բերելով այնտեղից «օրհնած ջուրը» խմեցրեց Գրիգորին:

Մթին եկաւ տէրաէրը, կարգաց մի զլուխ Աւետարանից. «Վասն առողջութեան»—յոյս տուեց Սաթինիկին և գնաց:

Իսկ հիւանդը անշարժ, կարծես, փայտացած պառկած էր իւր տեղում: Գրիգորը այդ մի քանի օրուան մէջ ակներկ լղարել էր. նորա կայտառ թշերի կարմրութիւնը տեղի էր տուել անգոյն սպիտակութեանը. նա ինքը, կարծես, փոքրացել, քամուել էր:

Երրորդ օրը նորան այցելեց Խան... սարայում յայտնի, հոչակաւոր «գալլաք» պառաւ Հերիքնազը. նա լուրջ, ծանրակցու կերպով դիտեց հիւանդի երեսը, նորա խորը ներս ընկած վառվռուն աչքերը և քանի մի անդամ շարժեց իւր ալեղարդ, արդէն կուցած, գողացող զլուխը:

—Ի՞նչ է... ծաղիկ է... կարմրուկ է... ի՞նչ է... ասա,

Հերիքնաղ-ջան, Քրիստոսի խաթրին... տղաս ձեռքիցս  
գնում է... ասա... աղերսում էր Սաթինիկը:

— Աստուծոյ պատիժ է, լուրջ, մի խորհրդաւոր ձայ-  
նով պատասխանեց Հերիքնազը, միայն մէկ ճար կայ...  
«Տիրամօր հողից պէտք է խմեցնել. Ես կը բերեմ... ու-  
նիմ ինձ տանը...»

Եւ նա կրկին նայեց հիւանդի հալումաշ եղած  
երեսին:

— Լաւ չէ... լաւ չէ... Աստուած փրկէ... Աստուած  
օդնական, շշնչաց նա և գուրս եկաւ խրճիթից:

Կէսօրին հիւանդին խմեցըին Տիրամօր հողը ջրով  
խառնած:

Հիւանդը չհանգստացաւ. նորա տաքութիւնը աւելի  
ևս սաստկացաւ. խոպոտ հեծկլատանքները արդէն անդա-  
դար թռչում էին նորա կրծքից:

Գիշերը Գրիգորը սկսեց գառանցել:

Տեսնում ես... այ... այն ամպը... ինչպէս հան-  
դարտ լողում է նա կապուտակ երկնքում... կարծես  
արծիւ լինի... այ.. նա երկու մաս բածանուեց... որ-  
քան նման է նա մեր խնձորենուն .. այ թերթիկները...  
ճիւղերը.. ահա... նա կորաւ .. նա չկայ. . տես .. տես...  
նա չկայ.. ուր են ոչխարներս... ուր են ոչխարներս,  
յանկարծ սթափում էր Գրիգորը և նստում անկողում:

— Հանգստացիր, որդիս... պառկիր... ասում էր լո-  
լով Սաթինիկը և զգուշութեամբ պառկացնում էր հի-  
ւանդ Գրիգորին:

Լուսամուտի առաջ գտնուող ծառի վերայից յան-  
կարծ թռաւ արթնացած աղուաւը և մի քանի անգամ  
երկարատես, տխուր կրկուց:

Սաթինիկը վախեցած, ցնցողաբար խաչակնքեց  
երեսը:

Այ.. առուակը... ինչպէս գեղեցիկ է հոսում նա  
կանաչի միջով... նորանում երեսում է երկինքը... ինչ-  
պիսի ոլոր պառյաներով կորչում է նա հեռուն, հեռուն.  
ուր է գնում նա... այ... նա խուլ կարկաչում է . նա  
երգում է. . լսում ես .. լսում ես... այ...

Եւ խոպոտ հեծկլատանքները կրկին ծածկում էին  
հիւանդի անզօր, թոյլ ձայնը:

Սաթինիկը ծնկաչոք աղօթում էր:

Այդ աղօթքը և պաղատանքը էր և անողորմ կոխ-  
Աստուծոյ հետ. նա ինդրում էր, պահանջում էր Աստու-  
ծուց, որ չառնէ իւր միակ Գրիգորին:

— Թող.. թող նորան ինձ մօտ.. մնց ես աղբեմ ա-  
ռանց Գրիգորիս.. Տէր Աստուած, լսիր ինձ մեղաւորիո..  
մեղքացիր...

Դրսում կրկին կրկուց չարագուշակ աղուաւը:

Հիւանդը լայն բաց արեց իւր շաշ աչքերը, ցնը-  
ցուեց և համր ճշաց:

— Հայրս.. հայրս... այ.. նա եկաւ... տես, և միանգա-  
մից ընկնելով մէջքի վերայ մնաց անշարժ, կարծես քա-  
րացած:

Խրճիթում ախեց խրհրդաւոր լսութիւն: Գրիգորի  
անմեղ հոգին արդէն սաւառնում էր գէտի Ամենակա-  
րողի յաւիտենական բարձունքը: Սաթինիկը մօտեցաւ  
Գրիգորին. ոչ լաց, ոչ հեկեկանք խեղճը կարծես ցնո-  
րուած լինէր. նա արձանացած, անմիտ շարունակում  
էր նայել Գրիգորի սրուած երեսին, ուր անխիղճ մահը  
արդէն փչել իւր ստոր շունչը:

Կրկին Խան.. սարան թաղուել է թարմ կանաչի  
մէջ կրկին վերածնոււած բնութիւնը զարդարուել է և

ցընծում է. կրկին լովում է անտառի խորհրդաւոր սօսափիւնը.. կրկին հայ գիւղացին ուրախ ուրախ երգում է իւր երդը, կրկին նորա բարձրաձայն «հարալոն» ծածկում է օդը...

Խաղողը արգէն կռացրել է իւր ծանրացած որթերը գետնին և սպասում է մօտեցող այգեքաղին. կըրկին դանդաղ լողում է արկը կապուտակ հօրիզոնում և իւր ճառագայթների ոսկեփայլ արտավայրումներոյի խաղում է կարկաչահոս վտակի պարզ, զովարար ջրերում..

Կրկին եկել է զքեղ, հարաւային ամառը. .

Գրիգորի փոքրիկ, անշուռք գերեզմանը ծածկուել է թարմ կանաչով, որի միջից ամօթիսած բարձրացնուռ է եւր զլիսիկը համեստ շուշանը. մեղմ զեփիւռը տառանում է նորա հոտաւէտ թերթիկները. մօտակայ ծառի վերայ երբեմն երբեմն նստում է սպիսակը և սկսում է իւր երդը. համնում են արգեօք Գրիգորի նեղ, մութ գերեզմանը նորա ուրախ դայլայիկները. լսում է նա .

Սաթինիկը պառաւել է:

Նա ապրում է սաստիկ աղքատութեան մէջ:

Նա մուրալով հայթայթում է իւր օրուայ ապ-

### **плюш:**

Նա մի քիչ ցնողուել է:

Գիւղում նորան կանչում են «Գիւ Սաթօ»:


Բայց Գիտ Սաթօն կը կին համոզուած է, որ մի օք Հասօն կը վերադառնայ վերջապէս իւր հայրենական Խան.. սարան:


Գիշեական սպասում է դեռ...



*3 2 v y.*

1. Շամիլամ.
  2. Ինչ էր երգում ըստին.
  3. Ծովի ափին. ||
  4. Երազ.
  5. Զութակի ձայնելը.
  6. Մի վարդի պատմութիւնը.
  7. Ցիմար ոչխարներ.
  8. Մռացուած շուն.
  9. Նա սպասում է դեռ.





11

ՀՀ Ազգային գրադարան



NL0353317

47315-